

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Ինչպե՞ս Կը Մղեն Արտագաղթի

Վերջին օրերուն դարձեալ ահագանգեր կը հնչեն, որ Հայաստանէն հեռանալու նոր ալիք կը սպասուի, նկատի առնելով որ տարեմուտէն սկսեալ երկրէն ներս սպառողական ապրանքներու գիներու զգալի աճ կ'արձանագրուի, նոյն ատեն եկամուտներու վրայ դրուած հարկերու բարձրացումը դարձած է ի գօրու, այսպիսով արեւմտեան մէջ առնելով Հայաստանի ժողովուրդի գրեթէ բոլոր խաւերը, որոնք առանց այդ ալ տնտեսապէս կը գտնուին ոչ նախանձելի վիճակի մէջ:

Գնաճը արդիւնք է այն մեծաշնորհներուն ու արտօնութիւններուն՝ տրուած փոքրաթիւ խումբ մը մարդոց, որոնք կը տնօրինեն Հայաստանի տնտեսութեան մեծ մասը ու կը շարունակեն կողոպտել ժողովուրդի ճակտի քրտինքով վաստակած գումարները: Իսկ, հարկերը կը բարձրանան կառավարութեան որոշումով՝ պետական դատարկ գանձը լեցնելու պարտաւորութենէն մեկնելով: Երկու պարագային ալ մեղաւորները նոյն իշխանութեան ներկայացուցիչներն են, որոնք այս կամ այն պատճառաւ, առ այսօր ծախողած են կայուն եւ հեռանկարային տնտեսական քաղաքականութիւն վարելով բարելաւելու ժողովուրդի կենսամակարդակը:

Այլ երկիրներու մէջ նման պարագաներուն առջեւ մարդիկ ըմբոստանալով փողոց դուրս կու գայ, իսկ կառավարութիւններ կը դիմեն կտրուկ քայլերու՝ մեղմելու համար յառաջացած դժգոհութիւնները: Այս երեւոյթները վերջերս պարզուեցան Իրանի եւ Թունիզի մէջ, ուր տեղի ունեցան բողոքի բուռն ցոյցեր, եղան բախումներ ու արձանագրուեցան զոհեր:

Բնականաբար ցանկալի չէ որ հարցը հասնի զոհեր տալու, սակայն շատերուն կը զարմացնէ, որ Հայաստանի ժողովուրդը դժգոհելով հանդերձ, մինչեւ օրս փողոց դուրս եկած չէ, ինչպէս որ կը մեր տարիներ առաջ՝ իշխանութիւններուն պարտադրելով զիջումներ ու հասնելով որոշ յաջողութիւններու: Այս կացութիւնը կը բացատրուի այն բանով, որ ժողովուրդը այլեւս յոգնած է ու մատնուած յուսալքութեան: Իսկ աւելի մտահոգիչը այն է, երբ կ'ըսուի թէ, անոնք գտած են բողոքելու այլ միջոց՝ հեռանալ երկրէն ու իրենց ընտանիքի ապագան փնտռել այլուր:

Ահաւասիկ, այսպէս է որ Հայաստանի իշխանութիւնները ժողովուրդը կը մղեն արտագաղթի՝ երկիրը հասցնելով աղետի եզրին: Իսկ մենք պարտաւոր ենք ահագանգ հնչեցնել ու անդադար գրել այս մասին:

«ՍԱՍԻՍ»

Լաւրովի Կարծիքով ԼՂ Խնդիրը Մէկ Փաստաթուղթով Լուծել Զնարաւոր Չէ, Անհրաժեշտ Է Փուլային Մօտեցում

Ռուսիոյ Դաշնութեան արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրով յայտարարած է որ, Ղարաբաղեան խնդիրը մէկ փաստաթուղթով հնարաւոր չէ կարգաւորել: Այս մասին ան խօսած է տարեկան ամփոփիչ իր ասուլիսին ժամանակ:

Արտաքին գործոց նախարարը ընդգծած է, որ վերջին տարիներուն ձեռնարկուած են մեծ ջանքեր՝ ամփոփելով հակամարտող կողմերու բոլոր դիրքորոշումները եւ փորձելով անոնցմէ առանձնացնել ԼՂ խնդրի կարգաւորման այս կամ այն հատուածին վերաբերեալ համընկող մօտեցումները: ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը ըսած է, որ միեւնոյն ժամանակ իրենք փորձած են յուշել այն փոխզիջումները, որոնք կողմերը կրնան չանգեցնել ընդհանուր յայտարարի այն հարցերուն մէջ, ուր դեռ տարաձայնութիւններ կան:

«Ռուսիոյ Դաշնութիւնը չի կրնար յստակ ծրագիրներ ունենալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման համար, քանի որ խնդիրը պէտք է լուծեն հակամարտող կողմերը: Իբրեւ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ Ռուսիան, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի հետ ամէն բան կ'ընէ կարգաւորման համար անհրաժեշտ պայմաններ



Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրով

ստեղծելու նպատակով», - ըսած է Լաւրով:

«Այս հիմնախնդիրը մէկ փաստաթուղթի մէջ մէկընդմիջտ հնարաւոր չէ լուծել: Անհրաժեշտ է փուլային մօտեցում, որ պիտի արտացոլէ համաձայնութիւնը այն մասին, ինչ հնարաւոր է հիմա եւ պիտի յստակացնէ աշխատանքի ուղիները այն հարցերուն շուրջ, որոնք կարիք ունին յաւելեալ քննարկումներու՝ յանուն վերջնական կարգաւորման, որ պիտի ներառէ նաեւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին հարցը», - յայտարարած Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը:

Ըստ «Freedom House»-ի Զեկոյցին Ժողովրդավրութիւնը Նահանջած Է Հայաստանի Ե՛ւ Ամերիկայի Մէջ

«Ազատութեան Տուն» (Freedom House) կազմակերպութեան տարեկան զեկոյցին համաձայն ժողովրդավրութիւնը նահանջ արձանագրած է ամբողջ աշխարհի մէջ, ազդուելով Ամերիկայի մէջ դեմոկրատական չափանիշներու արագ քայքայումէն:

Տարեկան զեկոյցի հեղինակները վերլուծած են աշխարհի մէջ քաղաքական իրաւունքներու եւ քաղաքացիական ազատութիւններու վիճակը:

Հայաստանը Freedom House-ի միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան կողմէ 44 միաւորով դարձեալ մասամբ ազատ երկիրներու շարքին է: «Ազատութիւնը աշխարհի մէջ 2018. Ժողովրդավրութիւնը ճգնաժամի մէջ» զեկոյցին համաձայն՝ երկիրը ոչ ազատ ճանչցուած է մամուլի ազատութեան, եւ մասամբ ազատ՝ համացանցի ազատութեան առումներով:

2017-ի վարկանիշին մէջ եւս Հայաստանը՝ 45 միաւորով, ճանչցուած էր մասամբ ազատ:

Հնարաւոր 100 միաւորէն 30



միաւորով, 2017-ի 33-ի փոխարէն, մասամբ ազատ ճանչցուած է նաեւ Արցախը:

Հարաւային Կովկասի մէջ մասամբ ազատ ճանչցուած է նաեւ Վրաստանը՝ 64 միաւորով: Ատրպէյճանը 12 կէտով ճանչցուած է ոչ ազատ երկիր: Իրանը եւ Թուրքիան նոյնպէս ոչ ազատ երկիրներու շարքին են՝ համապատասխանաբար 17 եւ 32 միաւորներով:

Զեկոյցին մէջ կը նշուի, որ Հայաստանի մէջ ընտրութիւնները անցած են ժողովրդավարական չափանիշներու խախտումներով. իշխանութեանը խախտումները կը շարունակուին:

Շար.ը էջ 4

Սերժ Սարգսեանը Կը Փափաքի, Որ Նոր Նախագահը Ընտրուի Լայն Զանաձայնութեամբ

Նախագահ Սերժ Սարգսեան ցանկութիւն յայտնած է, որպէսզի հանրապետութեան 4-րդ նախագահը ընտրուի խորհրդարանի ընդարձակ մեծամասնութեամբ: Այդ մասին ան խօսած է նախագահի նստավայրին մէջ՝ Ազգային ժողովի խորհուրդի հետ հանդիպման ժամանակ՝ յոյս յայտնելով, թէ այս ընտրութիւններուն Ազգային ժողովի բոլոր պատգամաւորները կը մօտենան պատասխանատուութեամբ:

«Մինչեւ այս տարուայ Մարտի 9-ը Ազգային ժողովը պէտք է ընտրի Հայաստանի Հանրապետութեան չորրորդ նախագահին: Յոյսով եմ, որ նոր սահմանադրական ընթացակարգով նախատեսուած այս ընտրութիւններին Ազգային ժողովի բոլոր պատգամաւորները կը մօտենան ամենայն պատասխանատուութեամբ: Եւ ի հարկէ, ցանկալի է, որ Հանրապետութեան նախագահը ընտրուի խորհրդարանական ընդարձակ համաձայնութեան պայմաններում», - ըսած է Սերժ Սարգսեանը:

Փոփոխուած Սահմանադրութեամբ, այս տարուան Ապրիլի սկսեալ երկրի առաջին պաշտօնեան ոչ թէ նախագահը պիտի ըլլայ, այլ վարչապետը: Նախագահ պիտի ընտրէ Ազգային ժողովը՝ եօթ տարի ժամկետով: Նախագահ պիտի դառնայ այն թեկնածուն, որ կը յաջողի ստանալ պատգամաւորներու ընդհանուր թիւի ձայներու երեք քառորդը՝ այսինքն 105 պատգամաւորէն առնուազն 79-ի ձայնը: Եթէ Հանրապետութեան նախագահ չընտրուի, պիտի իրականացուի ընտրութեան երկրորդ, նոյնիսկ՝ երրորդ փուլը:

Հայաստան ՄԱԿ-ի Պատուոյ Ցանկին Վրայ

Հայաստանի Հանրապետութիւնը ներառուած է ՄԱԿ-ի 2018-ի պատուոյ ցանկին վրայ (Honour roll)՝ կազմակերպութեան կանոնաւոր պիւտճէին ժամանակին եւ ամբողջութեամբ կատարած իր անդամավճարներուն համար:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան նշած են, որ 2018-ի Յունուարին Հայաստանի կառավարութեան կողմէ ՄԱԿ-ի կանոնաւոր ամսավարկին փոխանցուած է 145 843 \$՝ որպէս ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցութեան 2018-ի տարեկան անդամավճար:

Պատուոյ ցանկին մէջ կ'ընդգրկուին այն անդամ երկիրները, որոնք ընթացիկ տարուան առաջին 30 աշխատանքային օրուան ընթացքին ՄԱԿ-ի կանոնաւոր պիւտճէին ամբողջութեամբ կը վճարեն իրենց անդամակցութեան ֆինանսական պարտաւորութիւնները:

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Մակրոնի խորհուրդը Սերժ Սարգսեանին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Մամուլում տեղեկութիւն հրատարակուեց, որ Սերժ Սարգսեանը Յունուարի վերջին կը մեկնի Ֆրանսա: Մտրապուրզում նա ելոյթ կ'ունենայ ԵՆԽՎ ձմեռային նստաշրջանում, իսկ մինչ այդ, ըստ տեղեկութեան, Սերժ Սարգսեանը կը լինի Փարիզում եւ կը հանդիպի Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մակրոնի հետ:

Դա կը լինի Սարգսեանի առաջին հանդիպումը Ֆրանսայի նոր նախագահի հետ: Հայ-ֆրանսական օրակարգը մշտապէս եղել է յազօցած թէ տնտեսական, թէ քաղաքական, թէ մշակութային յարաբերութիւնների տեսանկիւնից: Ֆրանսասն Հայաստանի համար առանձնաշատակ պետութիւն է մի շարք տեսանկիւններով, այդ թւում պատմականօրէն ձեւաւորուած:

Յատկանշական է նաեւ, որ Ֆրանսա այցերը եւ Ֆրանսայի դեկավարութեան հետ հանդիպումները իրենց կայուն տեղն են ունեցել Հայաստանի իշխանութեան ձեւաւորման փուլերում անկախութեան ամբողջ ընթացքում: Այդ տեսանկիւնից էլ յատկանշական է, որ Սարգսեանը Ֆրանսա է մեկնում 2018-ի Ապրիլին ընդառաջ:

Ֆրանսա այցերը եւ Ֆրանսայի դեկավարութեան հետ հանդիպումները իրենց կայուն տեղն են ունեցել Հայաստանի իշխանութեան ձեւաւորման փուլերում անկախութեան ամբողջ ընթացքում

Ինչ էլ լինելու Մակրոն-Սարգսեան հնարաւոր հանդիպման օրակարգը: Հանդիպման մասին պաշտօնապէս ազդարարուած էլ է: Յայտնի է նաեւ, որ 2018 թուականին սպասուած է Մակրոնի այց Հայաստան, հաւանաբար Հոկտեմբերին տեղի ունենալիք Ֆրանկոֆոնիայի վեհաժողովի ընթացքում, որը Սերժ Սարգսեանը հուշակել է Հայաստանի անկախութիւնից ի վեր կարեւորագոյն միջոցառումներից մէկը:

Դրա շրջանակում սպասուած է Հայաստան մի քանի տասնեակ առաջին դէմքերի այց:

Ինչ կարգավիճակով կը դիմաւորի Սերժ Սարգսեանը Ֆրանկոֆոնիայի վեհաժողովը Երեւանում: Կը լինի՞ նա առաջին դէմքերին հիւրընկալող առաջին դէմք՝ վարչապետի կարգավիճակով, թէ ոչ: Կը քննարկի՞ Սարգսեանը Մակրոնի հետ այդ հեռակարգը:

Չի բացառուած, որ Ֆրանսայի նախագահի համար այդ հարցը չի ունենայ էական նշանակութիւն:

Փոխարէնը, Մակրոնն օրերս ազդարարել էր մի նախաձեռնութեան մասին, որը էական կարող է լինել Հայաստանի համար: Յամենայն դէպս, Հայաստանի համար այն էական խնդիր է եւ հետաքրքիր է, թէ արդեօք կը հետաքրքրի Սերժ Սարգսեանին, կամ արդեօք Ֆրանսայի նախագահը Սարգսեանին կը տայ այդ կապակցութեամբ որեւէ խորհուրդ:

Ֆրանսայի նախագահն օրերս ազդարարել է առաջիկայում կեղծ նորութիւնների եւ տեղեկութիւնների տարածման դէմ պայքարի օրենսդրական նախաձեռնութեան մասին, որը նաեւ նրա նախընտրա-

կան օրակարգի տարր էր: Մակրոնը առաջարկում է պայքարել կեղծ կամ «ֆէյք» տեղեկատւութեան դէմ՝ մամուլում, սոցցանցերում:

Նախաձեռնութիւնը Ֆրանսայում չունի միարժէք ընկալում, առաջացել են դժգոհութիւն, մտահոգութիւն, հարցեր՝ կապուած հնարաւոր գրաքննութեան հետ: Մասնաւորապէս, հարցեր են հնչում, թէ ինչպէս պետք է սահմանուի կեղծ տեղեկատւութիւնը, ո՞րն է լինելու յստակ սահմանումն ու չափորոշիչը:

Ինչ կը պատասխանի Ֆրանսայի նախագահն այդ հարցերին, դեռեւս պարզ է, սակայն յստակ է, որ նրա նախաձեռնութիւնն ուղղուած է Եւրոպայում ռուսական քարոզչութեան հետ, քարոզչական այն տեխնոլոգիաների եւ ռեսուրսների հետ, որ կիրառուած է Ռուսաստանը եւրոպացիների տրամադրութեան վրայ ազդելու համար: Մակրոնն այդ խնդիրը բարձրացրել է ընդհուպ Պոտսդամի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, երբ նրա իսկ հարեւանութեամբ բաց տեսքատով յայտարարել էր, որ ռուսական «Սպուտնիկ» եւ «Ռաշա Թուտէյ» գործակալութիւնները լրատուամիջոց չեն, այլ պրոպագանդայի գործիք եւ այդ պատճառով է արգելուել նրանց մուտքը

իր նախընտրական շտաբներ:

Կեղծ կամ «ֆէյք» քարոզչութեան հարցը օրակարգային է նաեւ Հայաստանի համար, ընդ որում թէ ռուսական ծագման ու ֆինանսաւորման, թէ հենց ներհայաստանեան: Դրա միջոցով Հայաստանում թէ հակաեւրոպական, հակաարեւմտեան քարոզչութիւն է իրականացուած, ինքնուրուած առաւելապէս կեղծիքի վրայ, թէ քարոզչութիւն է իրականացուած Հայաստանի պետական անվտանգութեան, ինքնիշխանութեան, եւ ընդհանրապէս Հայաստանում առողջ կամ սթափ բանականութեան դէմ:

Այդ երեւոյթները Հայաստանում գրեթէ վերջնականապէս աղաւղել ու քայքայել են թէ մեղիադաշտը՝ որն առանց այդ էլ էապէս նենգափոխուած ու խեղուած էր իշխանական եւ քաղաքական համակարգերի արատաւոր ազդեցութեան հետեւանքով, թէ ընդհանրապէս հասարակական կարծիքը, գործնականում ցանկացած տեղեկատուական մանիպուլյացիայի համար այն դարձնելով խոցելի:

Ընդ որում, խնդիրը գոյտ ներհայաստանեան չէ այն պարզ պատճառով, որ ազդեցութիւն է թողնում պետական քաղաքականութեան վրայ մի շարք արտաքին ուղղութիւններով:

Խոշոր հաշուով, այդ հարցն օրինակ շատ աւելի համարժէք կարող է լինել հայ-ֆրանսական օրակարգ կազմելու համատեքստում, քան ասենք Հայաստանի վարչապետի անուան հարցը ինքնին: Աւելին, Հայաստանի վարչապետի անուան հարցը թերեւս կարող է լինել միայն դրա համատեքստում:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետիր հոն արտայայտուող բոլոր միտքերը

Սերժ Սարգսեանի Անյուսալի Դեղատոմար

ՀԱՅԿ ԴԱԻԹԵԱՆ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի թանկացումների թեմայով հրաւիրուած խորհրդակցութեան մէջ երկու շատ նուրբ պատգամ կար, որոնք փոխանցեց անձամբ ինքը՝ Սերժ Սարգսեանը: Առաջինը թանկացումների ազդեցութիւնը մեղմելու համար դեղատոմս գտնելն էր, երկրորդը ճշտել՝ թանկացումների պատճառը օբիեկտիւ շուկայական գործընթացներն են, թէ՞ տնտեսվարողների ազանութիւնը:

Մրանք շատ կարեւոր ու ըստ էութեան Հայաստանի շուկայական շարաբերութիւնները բնորոշող հանգամանքներ են: Ազանութիւնը, որպէս այդպիսին, համամարդկային երեւոյթ է, եւ քանի որ իւրաքանչիւր պիզնեսի նպատակը հնարաւորինս շատ շահոյթ ստանալն է, ապա դժուար է միանշանակ ասել՝ որտեղ է աւարտում բարեխիղճ բիզնեսի սահմանը, եւ որտեղից սկսում ազանութեան եւ ժուժկալութեան նենգաւոր միտումը:

Աշխարհում գնաճի դէմ պայքարելու ամենաարդիւնաւէտ մեխանիզմը վաղուց գտնուած է՝ դա առողջ տնտեսական մրցակցութիւնն է, որի արդիւնքում գոյանում է սուեալ ապրանքի հնարաւոր նուազագոյն գինը: Երբ կայ շահերի բախում, եւ սպառող չկորցնելու շատ լուրջ պայքար, ապա որքան էլ ազան լինի տնտեսվարողը, գները ստիպուած է լինելու իջեցնել, հակառակ պարագայում գնորդը պարզապէս երես կը թեքի նրանից, եւ պիզնեսն ի վերջոյ կը տապալուի: Հայաստանում այդպէս չէ, յատկապէս երբ խօսքը վերաբերում է նաաջին սպառու մի շարք ապրանքներին:

Օրինակ՝ շաքարաւազի, պենզինի, թուչնամսի եւ բանանի ներկրման շուկաներում նման խնդիր չի կարող լինել, որովհետեւ այդ շուկաներում կան խոշոր խաղացողներ, ովքեր զբաղեցնում են այդ շուկաների գրեթէ 100 տոկոսը: Հետեւաբար նրանք իրաւունք ունեն սրտի ուղածի չափ ազան լինել, եւ որեւէ մէկը նրանց ազանութիւնը ստուգելու իրաւական մեխանիզմ կամ հնարաւորութիւն չունի, չնայած որ կայ յատուկ այն նպատակով ստեղծուած պետական մարմին՝ Տնտեսական մրցակցութեան պետական յանձնաժողով, որը պարտաւոր է ստուգել եւ պարզել, թէ արդեօք տնտեսվարողը գերիշխող դիրքի չարաշահում թող չի տուել: Բայց կեանքը ցոյց է տուել, որ այդ յանձնաժողովի տուած արդիւնքը թղթի վրայ գրուած յայտարարութիւններից այն կողմ չի անցնում, եւ Սերժ Սարգսեանն այդ մասին շատ լաւ գիտի: Հենց այդ պատճառով էլ յորդորել է խորհրդակցութեան մասնակից պաշտօնեաներին, «առանց յօգնելու, առանց հաշուի առնելու բազմաթիւ հանգամանքներ, մշտապէս հանրութեանը տեղեկացնել սպառողական շուկաներում տեղի ունեցող գործընթացների մասին»:

«Յաջորդը՝ եթէ իրօք որոշ ապրանքատեսակների թանկացումներն ունեն օբիեկտիւ պատճառներ, ապա պետք է մտածենք, թէ ինչպէս պետք է մեղմենք այդ հետեւանքները: Ես հիմա չեմ ուզում դեղատոմս առաջարկել, բայց օրինակ եմ ուզում բերել»,- ասել է Սերժ Սարգսեանը: Այսինքն՝ թանկացումների

առումով Սերժ Սարգսեանի առաջարկած դեղատոմսերից մէկը հանրութեանը բացատրութիւններ տալն է, երկրորդը՝ պետական սուբսիդիան՝ այս կամ այն ապրանքի գինը գապելու համար: Գիւղացիական մտնտեսութիւնների դիգվառելիքի սուբսիդիան, որի օրինակը նշել է նա, տարիներ շարունակ առանց մրցոյթի պետական պիւտոնէից յատկացուել է «Ֆլեշ» ընկերութեանը, որը, ինչպէս յայտնի է, պատկանում է Սերժ Սարգսեանի սիրելի օլիգարխ Բարսեղ Բէգլարեանին: Այն, որ այդ սուբսիդիան օգտակար է եղել «Ֆլեշի» համար, կարելի է չկասկածել, իսկ թէ ինչ է դրանից շահել գիւղացին, թերեւս կարելի է հարցնել հենց գիւղացուն: Ի դէպ, երբ կարէն կարապետեանը նոր էր ստանձնել վարչապետի պաշտօնը, կառավարութեան նիստերից մէկում յայտարարեց, թէ դիգվառելիքի սուբսիդաւորման նշուած մեխանիզմը պետք է փոխուի:

Փաստօրէն այժմ Սերժ Սարգսեանը յատակութիւն է մտցնում, որ կոնկրետ «Ֆլեշի» սուբսիդիան անխափան կտրուի: Իսկ ընդհանրապէս թանկացումները, որոնք նաեւ օբիեկտիւ գործօններով են պայմանաւորուած եւ տեղի են ունենում ողջ աշխարհում, մեղմուած են միայն ու միայն եկամուտների համարժէք աճով՝ ուրիշ դեղատոմս չկայ: Իսկ եկամուտների աճ հնարաւոր է միայն տնտեսութեան զարգացման շնորհիւ: Եթէ գները բարձրանում են, մարդկանց եկամուտները՝ ոչ, հասարակութիւնն աղքատանում է: Մեզ մօտ ճիշտ հակառակն է. փաստօրէն գներն աճում են, եկամուտները նուազում:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՍՈՒԱԹԵՐԹ՝
ՍՈՅՈՒԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱԴԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գագիկ Ծառուկեանի Զամար «Անփոխարինելի Մարդ Գոյութիւն Զուցի»

«Ծառուկեան» խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանը ի պատասխան այն հարցին, թէ արդեօք Սերժ Սարգսեանը անփոխարինելի գործիչ է, յայտարարած է՝ «Ինձ համար անփոխարինելի մարդ գոյութիւն չունի»:



«Ծառուկեան» խմբակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեան

Հարցին թէ ՀՀԿ-էն տեսակէտ հնչած է, թէ անվտանգութեան եւ Ղարաբաղեան խնդրի կարգաւորման մէջ Սերժ Սարգսեանը անփոխարինելի է, Ծառուկեանը արձագանգած է՝ «Անփոխարինելի մարդ գոյութիւն չունի: Այդ հարցերը տուէք Հանրապետական կուսակցութեանը: Խորհրդարանական ընտրութեան ժամանակ մեր ժողովուրդը լիարժէք 55 տոկոս ձայն տուել է Հանրապետական կուսակցութեանը, ուստի իրենք որոշելու են, իրենք ներկայացնելու են վարչապետի թեկնածուին»:

իրենց համար ընդունելի թեկնածու է, Ծառուկեան արձագանգած է՝ «Ես նորից եմ ասում. երբ որ Հանրապետական կուսակցութիւնը իր թեկնածուին կ'առաջադրի, մենք դրա մասին մեր կարծիքը կ'ասենք»:

Հարցին, թէ որպէս վարչապետի թեկնածու ով աւելի նախընտրելի է. Սերժ Սարգսեան, թէ՛ Կարէն Կարապետեանը, Ծառուկեան պատասխանած է, թէ թող ՀՀԿ-ն ներկայացնէ իր թեկնածուն. «Երբ որ իրենք համապատասխան թեկնածուն կ'առաջարկեն, մենք մեր խմբակցութիւնով կը քննարկենք եւ մեր տեսակէտը կ'ասենք»:

Յառաջիկայ ուրբաթ օր ընդդիմադիր «Ելք» դաշինքը թանկացումներու եւ հարկային բեռի աւելցման դէմ երթ պիտի իրականացնէ: Ծառուկեանը նոյնպէս կը կարծէ, որ անհրաժեշտ են Հարկային օրէնսգրքի մէջ փոփոխութիւններ կատարելը, եկամտահարկի նուազեցումը: Բաց փողոց դուրս գալու մասին ան չէ խօսած. կարեւորելով խորհրդարանական քննարկումները:

Լրագրողներէն մէկուն հարցին, թէ արդեօք Սերժ Սարգսեանը

2012-ԷՆ Ի Վեր Աւելի Քան 15,000 Մարդ Զրաժարած Է ՀՀ Քաղաքացիութենէն

Ժողովրդագէտ Արտակ Մարկոսեանը Lragir.am-ի հետ զրոյցի ժամանակ անդրադարձած է ՀՀ ոստիկանութեան պաշտօնական տուեալներուն, ըստ որո՛ւ՝ 2012-էն ի վեր աւելի քան 15,000 մարդ հրաժարած է ՀՀ քաղաքացիութենէն: Ըստ ժողովրդագէտի՝ ոստիկանութիւնը պէտք է յստակ պարզաբանում ներկայացնէ այս թիւերու հետ կապուած, քանի որ անոնք կասկած կը յարուցեն:

մարդ գնացել է Հայաստանից, իսկ վիճակագրական ծառայութիւնը հաշուում է այն մարդկանց, ովքեր հաշուառումից արդէն դուրս են եկել: Եթէ 2017 թուականի 9 ամիսներին միայն 13,500 մարդ է դուրս եկել հաշուառումից, դա ինչ տուեալ է, որ այդ տարիներին ընդամէնը 15 հազար մարդ է հրաժարուել քաղաքացիութիւնից», ըսած է ան:

«Ուղղակի այդ թուի վրայ զարմանում եմ, վերջին տարիներին միայն Ռուսաստանում քաղաքացիութիւն ստացած հայաստանցիները թիւը անհամեմատ մեծ է», ըսած է Արտակ Մարկոսեանը:

Ռուսաստանի պարագային, ըստ մասնագէտին, հայերը Հայաստանի քաղաքացիութենէն կը ձգտին հրաժարիլ այն պատճառով, որ այդ երկիրը փոխած է քաղաքացիութիւն ստանալու կարգերը:

Անոր խօսքով, Ռուսաստանի Դաշնութեան Ներքին գործոց գաղթի հարցերով գլխաւոր վարչութեան տուեալներու համաձայն՝ 2011-ին Ռուսաստանի Դաշնութեան քաղաքացիութիւն ընդունած է ՀՀ 7,848, 2012-ին՝ 13,176, 2013 -ին՝ 16,550, 2014-ին՝ 11,223, 2015-ին՝ 8,368, իսկ 2016-ին՝ 22,264 քաղաքացիներ:

«Եթէ նախկինում Ռուսաստանում ընդունում էին երկքաղաքացիութիւնը, ապա հիմա ասում են՝ ոչ, դու պէտք է հրաժարուես քո երկրի քաղաքացիութիւնից, որպէսզի այստեղ քաղաքացիութիւն ստանաս: Այդ պատճառով էլ վերջին տարիներին աճել է Հայաստանի այն քաղաքացիների թիւը, որոնք արդէն հրաժարուում են ՀՀ քաղաքացիութիւնից եւ ընդունում ՌԴ քաղաքացիութիւն», ըսած է Արտակ Մարկոսեան:

«Միայն նախորդ տարուան 9 ամսուայ տուեալներով՝ 13,500

Նոր Հարկային Օրէնագիրքը կը Հարուածէ ՏՏ Ոլորտը. Կարէն Վարդանեան

Հայաստանի իշխանութիւններու նախաձեռնութեամբ Յունուար 1-ին ուժի մէջ մտած նոր հարկային օրէնսգիրքը «հարուածում է տեղեկատուական թեխնոլոգիաների ոլորտին եւ լուրջ դժգոհութիւն է առաջացրել բնագաւառում», «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է համակարգչային ճարտարագիտութեան ձեռնարկութիւններու միութեան ղեկավար Կարէն Վարդանեանը:

Ան ընդգծած է, որ նոր օրէնսգիրքով նախատեսուած եկամտահարկի աւելցումը 150 հազար դրամէն աւելի աշխատավարձ ստացողներու համար պիտի հարկադրէ հայաստանեան տնտեսութեան ամենամրցունակ ճիւղի ներկայացուցիչներուն կա'մ մեծցնել ընկերութիւններու պահպանման ծախսերը, կա'մ անցնիլ ստուեր, կա'մ լքել Հայաստանը:

«Եթէ Քաղաքացին Դուրս Չգայ Փողոց, Որեւէ Փոփոխութիւն Տեղի Չի Ունենայ». Փաշինեան

Այս շաբաթուայ գլխաւոր քաղաքական իրադարձութիւնը թանկացումներու դէմ սպասուող երթն է: Այս մասին Խորհրդարանէն ներս հրաւիրած ասուլիսի ժամանակ ըսած է «Ելք» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը:



«Ելք» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան

Ան յոյս յայտնած է, որ «Ելք»-ի նախաձեռնած այս երթը լուրջ քաղաքական հետեւանքներ կ'ունենայ, շեշտելով, որ ամէն ինչ կախուած է ՀՀ քաղաքացիներու մասնակցութեան մակարդակէն:

«Ըստ հուլիսեան ՀՀԿ-ն մի դիրքորոշում ունի, որ ՀՀ քաղաքացիներն ըմբռնումով են մօտենում թանկացումներին եւ «քարտ պլանը» են տուել իշխանութիւններին այդ բոլոր քայլերն իրականացնելու համար: Մենք յստակ ուզում ենք, որ ՀՀ քաղաքացիներին հասկանալի լինի, քանի որ մեզ հարց են տալիս, թէ ինչով է երթը նպաստելու գների իջեցմանը: Հիմա արդէն փաստ է, որ Յունուարից սկսած թանկացումները Հարկային նոր օրէնսգրքի ուժի մէջ մտնելու հետեւանք են, ուրեմն դա կանխելու տարբերակը հարկային օրէնսդրութիւնում փոփոխութիւններ իրականացնելն է եւ հարկերը նախկին մակարդակի սահմանելը: Հարկային օրէնսգրքում փոփոխութիւններ անելու ձեւը հանրային ճնշում գործադրելն է: Մենք ուզում ենք ցոյց տալ, որ հանրութիւնը ոչ միայն խնդիր ունի այդ թանկացումներու հետ, այլ այդ թանկացումների յետագայ կասեցումը ձե-

լակերպում է որպէս քաղաքական պահանջ», - ըսած է ան: Փաշինեան նաեւ նշած է, որ «Ելքը» այս հարցի վերաբերեալ քաղաքացիներէն կ'ակնկալէ աւելի մեծ մանդատ, քան ընտրութիւններուն ստացած ձայները:

«Եթէ քաղաքացին այդ մանդատը տուեց, մենք այդ մանդատը կ'իրացնենք, եթէ չտուեց, մենք կ'արձանագրենք, որ քաղաքացին այդ մանդատը շարունակաբար չտուեց մեզ: Մենք ուզում ենք, որ քաղաքացին, անհատը իր դերակատարութիւնը լրջօրէն գիտակցի: Քանի դեռ մարդն ասում է. մէկ է, ոչ մի բան չի փոխուի, ոչ մի բան չի փոխուի», - ըսած է ան: Ըստ Փաշինեանի, եթէ առաջին հաւաքէն ետք կ'արձանագրուի, որ հանրային մասնակցութիւնը մեծցնելու տեղ կայ, ցոյցերը կը շարունակուին:

«Եթէ քաղաքացին այդ մանդատը տուեց, մենք այդ մանդատը կ'իրացնենք, եթէ չտուեց, մենք կ'արձանագրենք, որ քաղաքացին այդ մանդատը շարունակաբար չտուեց մեզ: Մենք ուզում ենք, որ քաղաքացին, անհատը իր դերակատարութիւնը լրջօրէն գիտակցի: Քանի դեռ մարդն ասում է. մէկ է, ոչ մի բան չի փոխուի, ոչ մի բան չի փոխուի», - ըսած է ան: Ըստ Փաշինեանի, եթէ առաջին հաւաքէն ետք կ'արձանագրուի, որ հանրային մասնակցութիւնը մեծցնելու տեղ կայ, ցոյցերը կը շարունակուին:

ՄԻԵԴ-ը Կարելոր Արձանագրում Ըրած Է Հայաստանի Վերաբերեալ

«Ելք» խմբակցութեան պատգամաւոր Արտակ Զեյնալեանը խորհրդարանէն ներս յայտարարութիւններու ժամանակ խօսած է Հայաստանի մէջ արդար դատաքննութեան իրաւունքի խախտման մասին:



«Ելք» խմբակցութեան պատգամաւոր Արտակ Զեյնալեան

Մի քանի օր առաջ Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանը (ՄԻԵԴ) վճիռ կայացուցած է Արզումանեանը ընդդէմ Հայաստանի գործով, ճանչցած է Ալեքսանտր Արզումանեանի անձնական ազատութեան եւ անձեռնմխելիութեան իրաւունքի խախտման փաստը, քանի որ կալանքի երկարացման դատական գործերը, բացի օրէնքի դրոյթի պարզ յղումէն, չէին պարունակեր որեւէ փաստական հիմք:

Հոգիչ իրավիճակ է, երբ ՄԻԵԴ-ը տուեալ երկրի վճռաբեկ դատարանը. ոչ արդիւնաւէտ պաշտպանութեան միջոց կը ճանչնայ:

ՄԻԵԴ-ը իր վճիռի այդ հատուածը հիմնաւորած է ՀՀ-ի դէմ կայացուցած շարք մը այլ որոշումներով, ուր խնդիրը նոյնութեամբ կրկնուած է: Ըստ Զեյնալեանի, այս խնդիրը շարունակական բնոյթ կը կրէ:

Զեյնալեանը նշած է, որ վեջին 10 տարիներուն Հայաստանը Եւրոխորհուրդի անդամ երկիրներու շարքին անազատութեան մէջ գտնուող անձերու քանակով ամենամեծ աճը ունեցած է: Ըստ Եւրոպայի խորհուրդի քրէական վիճակագրութեան տարեկան զեկոյցին. Հայաստանի մէջ առկայ է 3888 անազատութեան մէջ գտնուող անձ, ինչը Եւրոպայի խորհուրդի միջին ցուցանիշէն աւելի է:

Անոր խօսքով. ՄԻԵԴ-ը մէկ այլ կարեւոր արձանագրում ըրած է, այդ այն է, որ կալանքի գործերով դատական վերահսկողութիւնը Հայաստանի մէջ անարդիւնաւէտ է, եւ վճռաբեկ դատարանը իրաւունքի պաշտպանութեան արդիւնաւէտ միջոց չի հանդիսանար: Ըստ Զեյնալեանի, սա կը նշանակէ, որ կալանքի որոշումները վերաքննիչ դատարանի մէջ բողոքարկելէ ետք մարդիկ կրնան ՄԻԵԴ դիմել, եթէ կը կարծեն, որ խախտուած է իրենց իրաւունքը: Սա, ըստ իրաւապաշտպանին, մտա-

«Սա չափազանց մտահոգիչ է, եւ ՀՀ պաշտօնատար անձանց, դատական համակարգին կոչ եմ անում սթափուել: Բոլոր միջնորդութիւնների 93 տոկոսը բաւարարում են, սա չի կարելի հանդուրժել», - ըսած է Զեյնալեան:

ԼՈՒՐԵՐ

Կարո Փայլան Ցուցնունք Տուած է Եւրոպա Գտնուող Թուրքահայերուն Դէմ Մահափորձի Յայտարարութիւններուն Վերաբերեալ

Թուրքիոյ ընդդիմադիր Ժողովրդադեմոկրատական կուսակցութեան անդամ, խորհրդարանի հայ պատգամաւոր Կարո Փայլանը ներկայացած է Անգարայի դատախազութիւն՝ Եւրոպայի մէջ հայերու, ալեւիններու եւ քիւրտերու դէմ մահափորձերու շարքի նախապատրաստման մասին տեղեկութեան հիման վրայ յարուցուած գործի ծիրէն ներս ցուցմունք տալու:



Թուրքիոյ խորհրդարանի հայ անդամ Կարո Փայլան

Թրքական demokrathaber.org կայքը կը հարորդէ, թէ Փայլանին ուղեկցած են անոր փաստաբանները:

Հայ պատգամաւորը շեշտած է, որ տարիներ առաջ գրեթէ նոյն կերպով թիրախաւորուած ու սպաննուած է պոլսահայ լրագրող Հրանդ Տինքը:

«Այս երկրի պատմութեան մէջ կայ Հրանդ Տինքի սպանութեան մասին իրականութիւն մը: Այդ շրջանին ան ալ մամուլի ու իշխանութիւններու կողմէ թիրախ դարձաւ: Ան իմ ընկերն էր, ես ուզեցի, որ ան լքէ երկիրը, բայց մնաց ու սպաննուեցաւ: Այժմ ալ քաղաքական գործիչներու եւ մամուլի կողմէ թիրախի տակ կ'առնուին շարք մը մտաւորականներ, որոնց մէջ է նաեւ Ճան Տիւնտարը: Գերմանիայէն տեղեկութիւններ ստացանք, որ անոնց դէմ մահափորձեր կը նախապատրաստուի: Այս թեմային վերաբերեալ որեւէ իրեղէն ապացոյց ու փաստաթուղթ չկայ, կայ բանաւոր տեղեկատուութիւն միայն», - ըսած է Փայլան:

Կարո Փայլանը նախապէս զգուշացուցած էր, որ հայերու, ալեւիններու, քիւրտերու, ինչպէս նաեւ Թուրքիոյ մէջ եղած ճնշումներու հետեւանքով երկիրը լքած ընդդիմադիր գործիչներու, մտաւորականներու եւ լրագրողներու դէմ մահափորձերու ամբողջ շարք մը նախապատրաստող ու Թուրքիայէն ուղղորդուած յանցախուժմբ արդէն ցուցակ կազմած է:

Տեղեկատուութիւնը հաստատած էին եւրոպական սթամպուլահայ շարք մը մտաւորականներ. մասնաւորապէս՝ թրքական demokrathaber.org կայքի նախկին խմբագիր Հրանդ Գասպարեանը,

որ վերջին ամիսներուն, մշտական բնակութեան նպատակով տեղափոխուած է Գերմանիոյ մայրաքաղաք Պեռլին, յայտնած էր, որ մահափորձերու շարքին մասին տեղեկութիւն ստանալէն ետք համարած է գերմանական իշխանութիւններուն կողմէ յատուկ պաշտպանութեան տակ առնուած անձերուն շարքը:

Օրեր առաջ, Պրիւքսէլի մէջ, անյայտ անձերու կողմէ յարձակման ենթարկուած էր հայկական «Սահակեան» միութիւնը, որուն հիմնադիր կազմին մէջ Թուրքիա ծնած հայեր կան:

Յայտնի էր նաեւ, որ առկայ վտանգին պատճառով, պոլսահայ գրող Հայկո Պաղտատը Պեռլինի մէջ ստիպուած էր ելոյթ ունենալ գրահապատ բաճկոնով: Պրիւքսէլէն դէպքէն ետք՝ ան հասարակական ցանցերէն մէկուն իր էջին վրայ գրած էր. «մէկ անգամ ես կը նախազգուշացնեմ՝ լրջօրէն վերաբերուեցէք Գերմանիոյ մէջ մահափորձերու մասին պնդումներուն»:

Օրերս ալ Գերմանիոյ մէջ մահափորձի ենթարկուած է յայտնի քիւրտ ֆութպոլիստ Տենիզ Նաքիլ, որուն համար նոյնպէս կը կասկածուին թուրք ազգայնականները: Վերջինս ոստիկանութեան տուած իր վկայութեան մէջ նոյնպէս հաստատած է, որ իր դէմ յարձակումը կրնայ ըլլալ Թուրք ազգայնականներու գործը:

«ԼՂ Խնդիրը Պետք է Կարգաւորուի Ատրպէյճանի Տարածքային Ամբողջականութեան Սկզբունքով». Ալիեւ

Պաշտօնական Պաքուն կրկին պնդած է, որ «Ղարաբաղեան հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան սկզբունքի շրջանակներէն ներս»: Այս մասին, մասնաւորապէս, յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Ատրպէյճանի արդարացի դիրքորոշումը այդ հակամարտութեան կարգաւորման հարցով հիմնուած է միջազգային իրաւունքի վրայ: Միջազգային հանրութիւնը Լեռնային Ղարաբաղը կը ճանչնայ որպէս Ատրպէյճանի անքակտելի մաս», - համոզմունք յայտնած է Իլհամ Ալիեւը, ելոյթ ունենալով նախարարներու գրասենեակի՝ 2017 թուականի երկրի տնտեսական զարգացման նուիրուած նիստին:

Ատրպէյճանական կառավարութեան մօտ իր ծաւալուն ելոյթի ընթացքին Իլհամ Ալիեւը մէկ կողմէն ընդգծած է ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման անհրաժեշտութիւնը, միւս կողմէն յայտարարած է, որ Ատրպէյճանը կը պատրաստուի ժամանակակից ռազմական սարքեր ձեռք բերել:

«Համաշխարհային վարկանիշի համաձայն, ատրպէյճանական բանակը կը հանդիսանայ աշխարհի ամենաուժեղ բանակներէն մէկը: Ատրպէյճանի ռազմական ներուժը մեծցած է», - յայտարարած է Ատրպէյճանի ղեկավարը՝ նշելով, որ ընթացիկ տարուան ալ այդ ուղղութեամբ քայլեր պիտի ձեռնարկուին եւ նոր տեսակի զէնքեր պիտի գնուին:

Համաշխարհային Դրամատան Կանխատեսումով 2018-ին Հայաստանի Տնտեսական Աճը Պիտի Կազմէ 3.7 Տոկոս

Համաշխարհային դրամատան մասնագէտները կը կարծեն, որ յառաջիկայ երեք տարիներու ընթացքին Հայաստանի մէջ տնտեսական աճը չի գերազանցեր 4 տոկոսը: «Համաշխարհային տնտեսութեան հեռանկարները» գեկոյցին մէջ Հայաստանի վերաբերեալ ներկայացուած է հետեւեալ կանխատեսումը՝ 2018 թուականին տնտեսական աճը պիտի կազմէ 3.7 տոկոս, 2019 եւ 20 թուականներուն՝ 4 տոկոս:

Մինչդեռ Հայաստանի Ֆինանսներու նախարարութիւնը աւելի վաղ յայտարարած էր, որ դիտարկուող ժամանակահատուածին մէջ Հայաստանի տնտեսութիւնը պիտի աճի 4.7- 5.7 տոկոսով: Պետական պիւտձէի համաձայն, 2018 թուականին կը ծրագրուի ապահովել 4.5 տոկոս տնտեսական աճ:

Մեկնաբանելով Համաշխարհային դրամատան ներկայացու-

ցած ցուցանիշները՝ ֆինանսներու նախարարութիւնը տարբերութիւնը կը բացատրէ մեթոտաբանութեամբ:

Հակառակ տնտեսական աճի համեստ կանխատեսումներուն՝ Համաշխարհային դրամատունը բարելաւած է կարծիքը Հայաստանի տնտեսութեան հեռանկարներուն վերաբերեալ: 2017 թուականի ամրան կառուցի մասնագէտները այս տարուայ համար կանխատեսած էին 3.6 տոկոս աճ: Ֆինանսներու փոխնախարար Արմէն Հայրապետեանը համոզուած է, որ միջազգային հեղինակաւոր կառուցները կը նկատեն դրական միտումները Հայաստանի տնտեսութեան մէջ:

Միաժամանակ գեկոյցին մէջ ընդգծուած է, որ տարածաշրջանային տնտեսութեան զարգացման մէջ մեծ է Ռուսաստանի եւ Թուրքիոյ դերը:

Ժողովրդավրութիւնը Նահանջի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

խող կուսակցութիւնը ընդդիմութեան նկատմամբ ճնշումներ բանեցուցած է, ահաբեկած է ընտրողները, չարաշահած վարչական աղբիւրները՝ իշխանութիւնը պահելու համար: Հայաստանի մէջ աղաղակող ընտրախախտումները կը հակասեն երկրի՝ Եւրոմիութեան հետ սերտ փոխարարութիւններու ձգտումին, որու հետ Նոյեմբերին ստորագրուած է Համապարտփակ եւ ընդլայնուած գործընկերութեան մասին համաձայնագիրը:

Զեկոյցի հեղինակները նշած են, որ Միացեալ Նահանգներու մէջ անցած 7 տարիներուն նահանջ նկատուած է: Սակայն, 2017-ին անկումը արագացած է, որուն պատճառները նկատուած են 2016 թուականին ռուսերու միջամտութիւնը ԱՄՆ նախագահական ընտրութիւններուն, նոր վարչակազմի, այդ շարքին. ԱՄՆ նախագահ Տանըլտ

Թրամփի կողմէ բարոյագիտութեան (էթիքայի) հիմնարար չափանիշներու ոտնահարումը, կառավարութեան աշխատանքի թափանցիկութեան նուազումը:

Այդպիսով, Միացեալ Նահանգները 100-միաւորէն ունի 86 միաւոր, եւ կը գիջի Ֆրանսային, Գերմանիային եւ Մեծ Բրիտանիային, սակայն բարձր տեղ կը գրաւէ «ազատ» երկիրներու շարքին:

Աշխարհի բնակչութիւնը 7 միլիառ 400 միլիոն է: Մարդոց 39 տոկոսը կ'ապրի «ազատ» երկրներու մէջ, 24 տոկոսը. «մասամբ ազատ», եւ 37 տոկոսը. «ոչ-ազատ»: Զեկոյցին մէջ նշուած է, որ 195 պետութիւններու 45 տոկոսը «ազատ» է, 30 տոկոսը. «մասամբ ազատ», 25 տոկոսը. «ոչ-ազատ»:

Աշխարհի «ոչ-ազատ» երկիրներու ցուցակին մէջ վերջին հինգ տեղերը կը գրաւեն Թուրքիայի մէջնաստանը, Հիւսիսային Գորէան, էրիթրէան, Հարաւային Սուտանը եւ Սուրիան:

ՄԻԵԴ-ի Վճիռը - Հայաստան Պետք է Դեսպան Արզումանեանին Փոխհատուցում Վճարէ

Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը հրապարակած է Ալեքսանտր Արզումանեանն ընդդէմ Հայաստանի գործով դատավճիռը եւ պարտաւորեցուցած է Հայաստանին 2500 եւրո փոխհատուցում վճարել Արզումանեանին: Այս մասին նշուած է ՄԻԵԴ-ի կայքին մէջ:

Ալեքսանտր Արզումանեանը բողոքարկած է իրեն կալանքի տակ պահելու հանգամանքը:

Յիշեցնենք, որ Ալեքսանտր Արզումանեանը ձերբակալուած էր 2007 թուականի մայիսին եւ կալանաւորուած ապօրինի եկամուտներու օրինականացման կասկածանքով:

Անոր կալանքը անընդհատ երկարաձգուած է մինչեւ սեպտեմբեր 2007, որմէ ետք խափանման միջոցը փոխուած է հանրապետութենէն չբացակայելու ստորագրութեամբ:

Ալեքսանտր Արզումանեանը կը համարէ, որ խախտուած են Ազատութեան եւ անձնական անձեռնմխելիութեան, ողջամիտ ժամկէտի



Դեսպան Ալեքսանտր Արզումանեան

մէջ դատական քննութեան իրաւունքները:

Տեղեկացնենք, որ Արզումանեանը այժմ Դանիայի մէջ Հայաստանի դեսպանն է:

«Վիզիտ Սարգսեանին Պետք է Ուղարկել «Հայաստան» Հիմնադրամ

«Պաշտպանութեան նախարար Վիզիտ Սարգսեանին պէտք է ուղարկել «Հայաստան» համահայկական հիմնադրամ աշխատելու, քանի որ ինչ հարց առաջանում է, նա միանգամից փող է հաւաքում», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ նշած է նախկին վարչապետ, ընդդիմադիր պատգամաւոր Արամ Սարգսեանը, քննադատելով պաշտպանութեան նախարարի դրամահաւաքի կոչը:



ՀՀ Պաշտպանութեան նախարար Վիզիտ Սարգսեան

Յիշեցնենք, որ անցած շաբաթ օր ֆէյսպուքեան իր էջին վրայ, Վիզիտ Սարգսեանը գրառում կատարած էր, կոչ ընելով վիրաւոր գինձառայող Ալպերթ Դալլաքեանին արտերկրի մէջ բուժելու համար 45 հազար տոլար հաւաքել:

«Օրէնքով մենք չենք կարող փոխհատուցել արտերկրում այդ վիրահատութեան կատարումը, քանի որ այն հնարաւոր է կազմակերպել նաեւ Հայաստանում: Բայց արտերկրի բուժարաններում, որ ունեն անհամեմատ ավելի մեծ փորձ եւ հմտութիւններ այս հարցում, Ալպերթի արագ ապաքինման հաւանականութիւնն անհամեմատ մեծ է: Ես եմ խորհուրդ տուել ընտանիքին փորձել նման դրամահաւաքի միջոցով հաւաքել անհրաժեշտ գումարը: Ես անձամբ եւ իմ մի քանի ընկերներ կը տրամադրենք պահանջուող գումարի. 45 հազար տոլարի 10 տոկոսը», - պարզաբանած էր Վիզիտ Սարգսեանը, կոչ ընելով բոլորին միանալ դրամահաւաքին:

Սարգսեան զրոյցի ժամանակ ըսած է. - «Ճիշդ կը լինի, որ Վիզիտ Սարգսեանին նշանակեն «Հայաստան» հիմնադրամում, էլ մարդը գնայ, իր գործով զբաղուի: Իսկապէս ցանկացած հարց, ինչ առաջանում է ՊՆ-ում, Վիզիտ Սարգսեանն առաջարկում է փող հաւաքել, ինչը, միանշանակ, պաշտպանութեան նախարարի գործառնոյթ է, էլ խնդիրներն այդպէս չեն լու-

ծում, էլ խնդիրները լուծման պետական ճանապարհներ ունեն, եւ պաշտպանութեան նախարարը երկու ոտքը մի կօշիկ դրած պէտք է սեղմեր, որ էլ պետական ճանապարհները հնարաւորինս բացուէին Պաշտպանութեան նախարարութեան համար, ոչ թէ դիմէր ժողովրդին: Էլ «Հայաստան» հիմնադրամի գործն է: Գործող նախագահը թող ուղարկի էլ մարդուն էնտեղ, էլ մարդն էլ էնտեղ իրեն լաւ կը զգայ, մի.՞գուցէ այնտեղ իր աշխատանքն ավել լաւ ստացուի»:

Հարցին, թէ պաշտպանութեան նախարարին հարի՞ր չէր նման առաջարկով հանդէս գալը, նախկին վարչապետը պատասխանած է. - «Ի հարկէ, դա ակնյայտ է»:

Վիզիտ Սարգսեանի այս գրառումը սուր քննադատութեան արժանացած է ֆէյսպուքեան օգտատէրերու կողմէ, շատերը անթույլատրելի համարած են պաշտպանութեան նախարարի այսօրինակ դրամահաւաքը. յիշեցնելով, որ գինուորներու բուժօգնութեան համար յատուկ ֆոնտ բացուած է, եւ աշխատող քաղաքացիներէն ամսական 1000 դրամ կը գանձուի:

ԱՄՆ Հայաստանը Անվտանգ Կը Համարէ Ամերիկացիներու ճանապարհորդութիւններու Համար

ԱՄՆ արտաքին գործոց նախարարութիւնը ներկայացուցած է իր քաղաքացիներուն ճանապարհորդութիւններու անվտանգութեան մասին իրազեկելու նոր համակարգը, որով ծիրէն ներս բոլոր երկիրները բաժանուած են 4 կարգի:

Հայաստանը յայտնուած է երկիրներու առաջին կարգին մէջ՝ Normal Precautions, այսինքն՝ ճանապարհորդելու ընթացքին անհրաժեշտ է հետեւել զգուշութեան սովորական միջոցներու: Այս կարգի վերաբերեալ գերատեսչութեան պարզաբանման մէջ նշուած է. «Սա անվտանգութեան վտանգի համար ամենացած խորհրդատուական մակարդակն է: Որեւէ միջազգային ճանապարհորդութիւն որոշ վտանգ կը պարունակէ: Միւս երկիրներու պայմանները կրնան տարբերիլ Միացեալ Նահանգներու պայմաններէն եւ որեւէ ատեն փոփոխուիլ»:

Վրաստանը նոյնպէս առաջին կարգի մէջ է: Իսկ Ատրպէյճանը մտած է երկրորդ կարգի մէջ՝ Increased Caution, այսինքն՝ ճամբորդելու ատեն անհրաժեշտ է անվտանգութեան միջոցներուն հետեւիլ: Կը նշուի, որ սա կապուած է

երկրին մէջ ահաբեկչութեան սպառնալիքի հետ:

Ռուսիան ու Թուրքիան կը մտնեն երրորդ կարգի մէջ՝ Reconsider Travel, այսինքն՝ «ճամբորդելէն առաջ մէկ անգամ եւս մտածեցէք»: Սա անվտանգութեան «լուրջ» սպառնալիք կը նշանակէ:

Թուրքիոյ մասին նաեւ կը նշուի, որ բացի ահաբեկչութեան սպառնալիքէ, կան նաեւ «կամայական ձեւերով վտանգը: Գործող արտաքին գործիչներու համաձայն՝ անվտանգութեան ուժերը ենթադրեալ ահաբեկչական կազմակերպութիւններուն պատկանելու համար կասկածաբարներուն կը ձեռքարկուեն սուղ կամ գաղտնի ապացոյցներու եւ հիմնաւորումներու հիման վրայ, որոնք քաղաքականապէս պատճառաբանուած կը թուին: ԱՄՆ քաղաքացիներուն համար նաեւ ուղեւորութիւններու արգելք կիրառուած է, որ անոնց թոյլ չէ տուած Թուրքիայէն հեռանալ: Ժողովներուն, բողոքներուն եւ ցոյցերուն մասնակցութիւնը, որոնց թուրքիոյ կառավարութիւնը, որոնք թուրքիոյ կառավարութիւնը ակնյայտօրէն հաւանութիւն չի տար, կրնան կալանաւորման յանգեցնել:

Հայաստանի Խորհրդարանը Ընդունած է Եզիտիներու Ցեղասպանութիւնը Ճանչցող Եւ Դատապարտող Յայտարարութիւն



Հայաստանի Ազգային ժողովը Երեքշաբթի օր առաջին ընթերցմամբ միաձայն ընդունած է «Ահաբեկչական խմբաւորումներու կողմէ իրենց վերահսկողութեան տակ գտնուող իրաքի Հանրապետութեան տարածքներու մէջ եզիտի ժողովուրդի նկատմամբ 2014-ին իրականացուած ցեղասպանութեան դատապարտման մասին» նախագիծը:

Նախագիծը դրուած է քուէարկութեան եւ ընդունուած է 91 կողմ եւ 1 ձեռնպահ ձայներու յարաբերակցութեամբ:

Նախագիծի յայտարարութեան հեղինակներուն ազգութեամբ եզիտի պատգամաւոր Ռուստամ Մախմուդեանին, Վահրամ Բաղդասարեանին եւ Արմէն Ռուստամեանին միացած

են նաեւ խմբակցութիւնները՝ «Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւն» խմբակցութիւնը, «Ծառուկեան» խմբակցութիւնը, «Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութիւնը, «Ելք» խմբակցութիւնը:

Նախ քան քուէարկութիւնը Հանրապետական Սամուէլ Ֆարմանեան նշած է, որ ըրած է առաջարկներ, որոնք կարծես թէ, չեն ընդունուած հեղինակներուն կողմէ. «Ոչ մէկ ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի մէջ ճանաչում բառը չ'օգտագործուի, մենք շատ երկիրներ կը մեղադրենք ընտրովի վերաբերմունքի համար, մենք ալ նոյնը չընենք ու ամբողջութեամբ դատապարտենք», - կոչ ըրած է ան:

Ատրպէյճանի Մէջ Ուսուցիչին Վրայ Կրակած Են՝ Դպրոցէն Ներս «Խաղաղութեան» Կոչեր Զնչեցնելու Պատճառով

Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի թիւ 220 դպրոց մտնելով, խումբ մը երիտասարդներ կրակած են դպրոցի անգլերէնի ուսուցիչ Ռոշան Ագիգովի վրայ, որ հանդէս եկած է Հայաստանի հետ «Խաղաղութիւն» հաստատելու կոչերով: Այս մասին կը յայտնէ «eurasianet.org»-ը:



Ռոշան Ագիգովը պնդած է, որ դպրոց ներխուժած երիտասարդները կրակելէ բացի նաեւ նուաստացուցած են իրեն:

«Անոնք ինձ ստորացուցին իմ աշակերտներու առջեւ: Ինձ հայ լրտես անուանեցին: Անոնց կարծիքով, ես Ատրպէյճան եկած եմ հայերու հրամանով Ատրպէյճանը քանդելու համար: Ես այդ ամէնով ցանկացած եմ ցոյց տալ միայն, որ խաղաղութիւնը եւ բախումը առանց իրար սպաննելու լուծելն ալ հնարաւոր է», - նշած է Ռոշան Ագիգով:

Դէպքը տեղի ունեցած է 28 դեկտեմբեր 2017-ին: Ռոշան Ագիգովի վրայ կրակելու դէպքին արձագանգելով Պաքուի թիւ 220 դպրոցի տնօրինութիւնը նշած է, որ այն ուսուցիչի հայամէտ յայտարարութիւններուն համար չէ կատարուած, այլ եղած է դասաւանդման դասական մեթոտներէն շեղելու

պատճառով: Միջադէպէն ետք ալ Ռոշան Ագիգով կը շարունակէ ընկերային ցանցերու մէջ գրառումներ կատարել եւ «Խաղաղութեան» կոչեր ընել:

Ռոշան Ագիգովը նաեւ տեսա-նիւթ հրատարակած է, ուր անոր աշակերտները կը բեմադրեն հայերու եւ ատրպէյճանցիներու բախումը:

Ռոշան Ագիգովի պնդումներն այն մասին, որ իր վրայ կրակած են հայամէտ յայտարարութիւններ ընելու համար, իրականութեան չեն համապատասխաներ: Անոր կողմէ հրատարակուած տեսանիւթը այդքան ալ չարտացոլեր Ռոշան Ագիգովի յայտարարութիւնը, քանի որ տեսանիւթին մէջ կը հնչեն նաեւ խիստ թշնամական կոչեր, որոնք ոչ թէ խաղաղութեան, այլ պատերազմի կոչեր են:

Տեղի եւ Անտեղի Կամիճներ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴՎԻԹԵԱՆ

Մփիւռ քահանայ տաղանդաւոր բեմադրիչ եւ դերասան Գրիգոր Սաթմեան իր անցեալի հաճելի եւ սրամիտ ներկայացումներէն (one man show) մէկուն մէջ, կերուխոնմի եւ խրախմանքի միջոցով մէջ հաւաքուած ունկնդիրները կը զուարճացնէր՝ երգի-ծանքի նիւթ ունենալով դասակարգ մը, որ կ'ուզէ պատկանիլ «երեւելի» անձերու խմբակին: Սաթմեանի կամիճները ուղղուած էին այն մարդոց, որոնց թիւը քիչ է մեր ազգային կեանքին մէջ, եւ որոնք յաճախ կը հպարտանան՝ ըսելով, թէ այսինչ կամ այնինչ «տոքթորին» կամ «ազգապետին» կամ «հարուստին» սեղանակից պիտի ըլլան: Այդ տեսակի մարդիկ ընդհանրապէս մարդ չեն հաւնիր եւ յաճախ ալ խեղճ ու համեստ ընտանիքներէ դուրս եկած՝ քիչ թէ շատ ունեւոր եւ ուսեալ կ'ըլլան: Այդպիսիները շատոնց մոռցած ըլլալ կը թուին, թէ մեր ժողովուրդը աքսորեալներէ ու որբանոցներէ ծնած կամ սերած ընտանիքներէ կը բաղկանայ եւ դասակարգային բարձր յարկերու վրայէն ուրիշին վերէն դիտելով՝ խոտոր է ազնիւ ու համեստ ըլլալու ակնկալութեամբ կազմուած մեր ազգային նկարագրին:

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի տօնական օրերուն առթիւ ամէն տեղ եւ ամէն կողմէ մաղթանքներ տրուեցան մարդոց մէջ սէր ու միութիւն ցանկացող պատասխանատուներէն, որոնք իրենց պաշտօնական հանգամանքին բերումով՝ այդ վիճակին մէջ ըլլալու երեւոյթը պէտք է ցոյց տային: Սակայն ամէնօրեայ իրենց տարեկան աշխատելաձեւին մէջ այդպիսիները կը գործեն այնպէս, որ «սէր եւ միութիւն» կը գիշի «մենք եւ դուք» սահմաններուն մէջ նստած ինքնահաւանութեան: Մարդիկ յաճախ կ'ուզեն պատկանիլ մեծամասնութեան մը, որ իրենց կու տայ զօրաւոր հոսանքին հետ թիափարելու հանգիստը: Դժուար է եւ յոգնեցուցիչ՝ հոսանքին դէմ թիափարելը, եւ այդ ընողները ընդհանրապէս կ'ըլլան զօրաւոր անհատականութեան տէր անձեր, որոնք չեն ցանկար արածիլ մեծամասնութեան շարքերուն մէջ: Յաճախ կը լսենք մեծամասնութեան պատկանողի մը բերնէն, թէ քանի՜ հոգի կը հաշուեն այս կամ այն խմբակի, հոսանքի կամ կողմի պատկանող մարդիկ, երբ լաւ պէտք է գիտնան

այդպիսիք, թէ թիւը չէ, որ բանի մը ճիշդ ըլլալու հիմաստը կ'որոշէ, եւ թէ քանակէն աւելի կարեւոր է որակը: Եթէ թիւին մէջ պիտի կայանար ճիշդ ըլլալու գաղտնիքը, այն ատեն ճշեալ ժողովուրդներու բացարձակ մեծամասնութեամբ ընտրեալ բունպետերը պէտք էր ընդունիլ որպէս ազգի ճիշմարիտ ներկայացուցիչներ: Եւ յետոյ, հայրենի բնաստեղծի մը խօսքը մէջբերելով, «միշտ չէ, որ պէտք է շատին հաւատալ, որովհետեւ ճիշդ է նաեւ, որ շատը լինում են սխալ»:

Թէ ինչու՞ կ'արծարծենք հոս այս նիւթը: Ուշադրութեան արժանի դարձած պէտք է ըլլայ շատերուն, թէ յետ Հայաստանի անկախացումին եւ Արցախի ազատագրումին, կարելի է ըսել, թէ դրականօրէն վերջ դրուած է սփիւռքահայ կեանքը կրօնը կուսակցական եւ եկեղեցական պայքարին: Սակայն Հայաստանի ներկայ իշխանութիւններու օրհնութեամբ եւ կարգադրութեամբ մէկ կողմին կը թուի, թէ յանձնուած է սփիւռքահայ «հանրապետութեան» իշխանութիւնը որովհետեւ այդ կողմը կը ներկայացնէ Մփիւռքի տարածքին սփռուած կազմակերպուած մեծամասնութիւնը: Այժմ էջ միաձնական կղերը իր «կողմնացոյցը» կորսնցուցած ըլլալ կը թուի եւ «անթիւ-խասականներու» մեծամասնութեան հետ ըլլալու եւ անոնց հետ գործակցելու տենչին մէջ՝ մոռցած ըլլալ կը թուի իր նախկին գործակիցները: Արդեօք Հանրապետականներու եւ Սերժ Սարգսեանի սերտ կուսակից եղող էջ միաձնի Ամենայն Հայոցին թելադրութեամբ է, որ այդ կողմը կը շարժի: Նուազ աղմուկ կայ Մփիւռքի մէջ եւ նուազ քննադատութիւն հայրենի իշխանութեանց նկատմամբ, քանիզ գոհ է մեծամասնութիւն ներկայացնող կողմը իրեն տրուած դերէն: Ոմանք կը մոռնան, որ սովետական կարգը Հայաստանի մէջ փլու եւ դուրսէն չգրաւուեցաւ, եւ հայրենի ներկայ իշխանութիւններուն հետ գործակցելով՝ ոմանք գայն գրաւած ըլլալու յաւակնութիւնը պէտք է ունենան:

Այս տարի պիտի նշուի Հայաստանի Ա. Հանրապետութեան հարիւրամեակը. այն հանրապետութեան, որուն կերտումը իրագործուեցաւ ամէն մէկ հայու մասնակցութեամբ եւ որուն դեկը վարելու բախտաւորութիւնը տրուեցաւ սփիւռքահայութեան ներկայ «հանրապետութիւն»-ը

«Արցախը Իրական Ժողովրդավարութիւն է» Կ'ըսէ Լէ Փեն Միրապոյի Քաղաքապետը

Արցախը իրական ժողովրդավարութիւն է, որուն նմանը չկայ Նման յայտարարութիւն ըրած է Ֆրանսայի Լէ Փեն Միրապո քաղաքի քաղաքապետ Մոնիք Սլիսան, որուն ղեկավարած քաղաքին մէջ Արցախի օրերու ծիրէն ներս շարք մը ձեռնարկներ կազմակերպուած են:

«Նոյն նշուած պատճառով ալ այդ երկիրը արժանի է մեր աջակցութեան», «La Provence»-ի հետ զրոյցի ընթացքին նշած է Լէ Փեն Միրապոյի քաղաքապետը: Մոնիք Սլիսան նշած է, որ 2001-ին քաղաքապետ դառնալէ ետք իր առաջին որոշումներէն մէկը եղած է քաղաքի հրապարակներէն մէկը վերանուանել յանուն 1915 թուականի Ապրիլ 24-ի Յեղասպանութեան յիշատակման: «Հայկական խնդիրները մօտ են իմ սրտին եւ նոյն այդ պատճառով ալ Արցախի հարցը եւս մեզի համար կարեւոր է: Մենք որոշեցինք կապեր հաստատել Արցախի հետ, եւ Լէ Փեն Միրապոյի դարձաւ Ֆրանսայի առաջին քաղաքը, որ Արցախի համայնքներէն մէկուն՝ Մարտունիի հետ համա-

գործակցութեան փաստաթուղթ ստորագրեց», շեշտած է ան:

Արցախի Հանրապետութեան պետական նախարարի խորհրդական Արտակ Բեկլարեան, որ եւս ներկայ գտնուած է Արցախի օրերու ծիրէն ներս կազմակերպուած ձեռնարկներուն, նշած է, որ Արցախի խնդիրը չի կրնար լուծուիլ զուտ տարածքային զիջումներու միջոցով: «Ազատագրուած տարածքները հայկական եղած են դեռ այն ատեն, երբ Սթալին որոշեց գանոնք նուիրել Ատրպէյճանին 1921-ին եւ մինչ 1923-ը, երբ «Օպլաստ»-ի ձեւաւորմամբ այդ տարածքները ներկուեցան «ատրպէյճանական գոյնով»: Այդ տարածքները արցախեան են եւ այդպիսին ալ կը մնան: Մեր Սահմանադրութիւնը այս հարցով շատ յստակ է», ամփոփած է Բեկլարեան:

Նշուած ձեռնարկներու ծիրին մէջ, Պուշտուոն շրջանի հայկական մշակութային միութիւնը շապիկներու վաճառքի միջոցով դրամահաւաք նախաձեռնած է Արցախի մէջ ծառայող զինուորներուն օժանդակելու համար:

Արցախի Մէջ Զբօսաշրջային Այցելութիւնները 41 Տոկոսով Աճած Են

Արցախի մէջ 2017 թուականին զօսաշրջային այցելութիւնները 2016-ի համեմատ աճած են 41 տոկոսով: Նոյն ցուցանիշը 2015-ի համեմատ աճած է մօտ 30 տոկոսով: Այս մասին յայտնած է Արցախի Հանրապետութեան մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զօսաշրջութեան նախարարութեան զբօսաշրջութեան վարչութեան պետ Արտակ Գրիգորեան:

«Մենք նաեւ ցուցանիշները կը համեմատենք 2015 թուականի հետ, որովհետեւ յայտնի է, որ 2016 թուականին զբօսաշրջութեան գաւառին մէջ ունեցանք անկում: Եր կը խօսինք զբօսաշրջութեան աճի մասին, միայն 2017-ի իրականացուած աշխատանքի արդիւնքով չէ: Այս արդիւնքը վերջին տարիներու բուռն քարոզարշաւին շնորհիւ է», ըսած է Արտակ Գրիգորեան:

Զօսաշրջիկներու աշխարհագրավարող կազմակերպութեան: Հանդիսութեանց սեղաններուն շուրջ պիտի նստին Սաթմեանի նկարագրած «տոքթորները», «ազգապետերը» եւ «հարուստները», եւ անոնց հետ նստիլ պիտի ուզեն մեծամասնութեան հետ երեւիլ

րութիւնը տարուէ տարի կ'ընդլայնուի: Այցելութիւններու թիւով առաջինը Ռուսիոյ քաղաքացիներն են, այնուհետեւ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Իրանի եւ այլն: Արցախի զօսաշրջային տեղեկատուական կեդրոններու միջոցով կատարուած ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ հիմնական զօսաշրջային վայրերը զօսաշրջիկներու հետաքրքրութիւններու շրջանակին մէջ են: Մասնաւորապէս Ստեփանակերտը, Շուշին, Գանձասարը, Տիգրանակերտը այցելութիւններու քանակի աճ ունին:

«Կը նախատեսենք մասնակցիլ միջազգային ցուցահանդէսներու: Այս տարի Ռուսիայէն կը սպասենք այցելութիւններու աճ, որովհետեւ այս շուկան թիրախ ընտրած ենք: Կ'աշխատինք նաեւ եւրոպական ուղղութեամբ», նշած է Արտակ Գրիգորեան:

ուզող մարդիկ: Լաւ կ'ըլլայ, որ այդպիսի մարդիկ քաջ գիտնան մեր ճշմարիտ ազգային պատմութիւնը եւ լաւ կ'ըլլայ, որ սեղանները ըլլան ոչ-սեփական, այլ ըլլան համապարփակ եւ ընդհանրական:

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY



M MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

(818) 500 9585
(818) 269 0909

«Ամուլսարի Հանքարդիւնաբերական Նախագիծը Բնական Միջավայրի Վրայ Ազդեցութեան Առումով Բարձր Ռիսկային է», - Եզրակացրել են Միջազգային Փորձագէտները



Հայաստանում Լիդիանի կողմից ներկայացուած Ամուլսարի ոսկու հանքի նախագծի կապակցութեամբ Միջազգային անկախ փորձագէտները 2017թ. Դեկտեմբերի 24-ին մերժել էին Ամուլսարի ոսկու ծրագրի խնդիրների շուրջ «Lydian International»-ի խորհրդատուների հետ եռակողմ հանդիպմանը մասնակցելու ԳՅ Բնապահպանութեան նախարար Արծուիկ Միմասեանի հրաւերը: Չնայած դրան, Բնապահպանութեան նախարարութիւնն ու «Լիդիանը», մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, ամէն դէպքում ինչ-որ փակ քննարկում են անցկացնելու այդ թեմայով: Յիշեցնենք, որ պատասխան մամակում միջազգային անկախ փորձագէտները մասնաւորապէս էին մերժում պատճառներն ու խոստացել, որ մի քանի օրուայ ընթացքում կը ներկայացնեն այս ծրագրի մասին իրենց վերջնական գնահատականը՝ հնարաւորինս պարզ, յստակ եւ հակիրճ:

Հայկական Բնապահպանական ճակատ (ԳԲԾ) քաղաքացիական նախաձեռնութիւնը քիմիական/բնապահպանական ինժեներ Յարութ Բրոնոզեանից էլեկտրոնային փոստով արդէն ստացուել է այդ վերջնական գնահատականի անգլերէն տարբերակը եւ դրան ուղեկցող համառօտագիրը: Ամբողջական գնահատականի հայերէն տարբերակը կը ներկայացնենք աւելի ուշ, քանի որ այն շատ լուրջ մասնագիտական փաստաթուղթ է եւ թարգմանելու համար աւելի երկար ժամանակ է անհրաժեշտ: Իսկ մինչ այդ ձեր ուշադրութեանն ենք ներկայացնում ուղեկցող համառօտագրի հայերէն թարգմանութիւնը:

Հայկական Բնապահպանական ճակատ

«Ամուլսարի ոսկու հանքի նախագծի հետ կապուած մտահոգութիւնների, հաւանական հետեւանքների եւ յանձնարարականների համառօտագիր. վերջնական փաթեթ Ներկայացուած է «Lydian International»-ի, Լիդիան Արմենիայի, ՀՀ կառավարութեան եւ բոլոր այլ շահագրգիռ անձանց ուշադրութեանը

Ողջունում ենք ձեզ, Մենք՝ Յարութ Բրոնոզեանի նախաձեռնութեամբ խորհրդատուութիւն իրականացնողներս, վերջին ութ ամիսների ընթացքում անց ենք կացրել Ամուլսարի ոսկու նախագծի մի շարք ուսումնասիրութիւններ: Մեր աշխատանքի գլխաւոր նպատակն էր իրականացնել նախագծի անկախ, մանրակրկիտ, քննողական տեխնիկական գնահատում՝ ուղղուած հանքի շահագործման ընթացքում, ինչպէս նաեւ դրանից յետոյ երկարատեւ հնարաւոր հետեւանքների բացառական: Այս գրութեանն ենք կցում մեր վերջին ու վերջնական ուսումնասիրութիւնը, որը նախագծի հնարաւոր հետեւանքների ամփոփագիրն է եւ պարունակում է Լիդիանին ուղղուած յանձնարարականներ, որպէսզի այն ի վիճակի լինի բարելաւել իր բնապահպանական ռազմավարութեան մշակումը: Մեր գրութեանը կից փաթեթը պարունակում է հետեւեալը. առաջնահերթ մտահոգութիւնների ու յանձնարարականների ցանկ, այնուհետեւ՝ մեր ուսումնասիրութիւններից բխող բոլոր մտահոգութիւնների, հնարաւոր հետեւանքների ու յանձնարարականների աւելի մանրամասն ցանկ, աշխարհում գոյութիւն ունեցող նմա-

Հարցումներ եւ Պատասխաններ հատորը կը բաղկանայ 160 էջերէ, որոնք աղերս ունին մեր եկեղեցական, ազգային, մշակութային եւ հոգեւոր կեանքի առնչակից նիւթերու հետ: Գիրքը դիւր ընթեռնելի է: Լեզուին ոճը յստակ եւ գեղեցիկ են: Բովանդակութիւնը՝ օգտաշատ եւ հաղորդական է: Թելադրական են նաեւ հատորին մէջի գաղափարները, զորս հեղինակը կը փոխանցէ զգայնութեամբ եւ ապ-

րումներով:

Սոյն հատորը կարգալէ ետք, անձնապէս ափսոսանք մը ունեցայ, որ երանի թէ ան գրուած ըլլար 70 տարիներ առաջ երբ որպէս ուսանող կ'արձանագրուէի Աստուածաբանական ձեմարան: Վստահաբար, պիտի օգտուէի անոր հաղորդած դասերէն:

Կը հիանամ Վեր. Դոկտ. Թուֆիկեանի Հայ Աւետարանական Եկեղեցու մասին ըրած աշխատասիրութեանց վրայ, ուր հեղինակը արդարօրէն կը նկարագրէ իր եկեղեցին, ոչ թէ միայն որպէս հոգեւոր շարժում, այլ նաեւ որպէս եկեղեցական Մարմին: Հեղինակը, ի պաշտօնէ Գործադիր Տնօրէնն է Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին, եւ այդ իմաստով նշանակալից տեսակէտը ունի եկեղեցու բնոյթին մասին:

Հաճոյքով կը յանձնարարեմ այս գիրքը անգլիախօս եւ հայախօս ընթերցասէր հասարակութեան:

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է ՊԵՅՐՈՒԹԱՅԱՅ ԳՐՈՂ ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՈՐ ՎԵՊԸ

2017-ի տարեվերջին, Կիլիկիոյ կաթողիկոսարանի տպարանէն լոյս ընծայուեցաւ Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակի 92-րդ հատորը՝ թատերագիր, արձակագիր եւ հրատարակիչ Արա Արծրունիի «Allegoria»-ն, խմբագրութեամբ՝ Ժիրայր Դանիէլեանի:

Հեղինակը իր երկը բնորոշած է երեւակայածին վէպ, որուն մէջ ընթերցողը պիտի հանդիպի սովորական ոճերէն տարբեր եղող իր մօտեցումներուն ու մտահոգութիւններուն:

Արա Արծրունիին գրական այս վերջին ստեղծագործութեան մէջ, հակառակ երեւակայածին վէպ բնութագրումին, կարելի է հանդիպել ընդհանուր մարդկութիւնը (ո՛չ անպայման հայկականը) յուզող հոգեվիճակներու, անարդարութեան դէմ ընդվզումներու, հասարակ մարդուն դէմ ցցելով իսկական արժէքներով թրծուած մարդը՝ գերմարդու տիպարով յատկանշուող, սակայն խուսափելով գերմարդը ֆեթիշա-



ցնելու փորձութենէն:

Արա Արծրունիին թատերական իր վերջին ստեղծագործութիւններով եւ մանաւանդ այս երեւակայածին վէպով, կը հանդիսանայ անհեթեթի եւ այլաբանական գրականութեան ներկայացուցիչը հայ գրականութեան մէջ:



ՊՈԼՍԱՅԱՅ ՄԻՈՒԹԻՒԼ Կը հրաւիրէ ձեզ

ՅՈՒԾ ԵՐԵԿՈՅԻ ՍԸ ՅՐԱՆԴ ՏԻՆՔԻ


ՆԱՅԱՏԱԿՈՒԹԵԱՆ 11Դ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ

Շաբաթ, Յունուար 20, Երեկոյեան ժամը 6:00ին
Պոլսահայ Միութեան Կեդրոնը
Բացման խօսք՝
ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՒԼԱԿ ԱՐԵՏԻՔԵԱՆ
(Պոլսահայ Միութեան Հոգաբարձու եւ Մշակութային Յանձնախումբի ատենապետ)

Հանդիսավար՝ Իրաւաբան ԷՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ

(Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան եւ Վարչական անդամ, Արդարութեան եւ Մարդկային Իրաւանց Հայ Օրէնսդրութեան Կեդրոնի)

Քննարկում եւ Ցոլացումներ ՓՐՕՖ. ԱՍԼԸ ՊԱԼԻ



(Իրաւաբանութեան Փրոֆ. UCLAի մէջ, Տնօրէնուհի UCLAի Կեդրոնի մէջ Մերձակայ Արեւելեան Ուսումնասիրութեանց, Անկոնի Տնօրէնուհի՝ Promise Մարդկային Իրաւանց Հիմնարկի)

ՉԵԿՈՒՑՈՂՆԵՐ

Տոքթ. Սինան Պիրտալ

Այցելու Օգնական Փրոֆ. Միջազգային Յարաբերութիւններու եւ Միջին Արեւելքի Ուսումնասիրութիւններու Դպրոցին, ԱՄՆ-ու մէջ: Geostrategyn իբրեւ ռեժիմի կառուցում, Թուրքիոյ ներկայ Արտաքին Զաղաքականութիւնը



Դոկտ. Ռուբէն Շէնկիլ

Ականաւոր հետազօտող, U.C.L.A.ի մէջ Salvagings: «Մահուան վերջը» Զաղաքին մէջ, ՄԵԿ Դար Անց

Դոկտ. Եթեան Թիւրքեղւմազ

Ֆրեզնոյի Պետական Համալսարանի Խանգատեան Հայկական Ուսումնասիրութիւններու այցելու Փրոֆ. Quo Vadis Թուրքիա: Մուրթ անցեալէն մինչեւ հասկնալի հեռանկարներ

Կլոր սեղանի շուրջ արծարծում՝ Քննարկողներ՝ Իրաւաբան Մինասեան եւ Փրոֆ. Պալի

Շնորհում՝ Հրանդ Տինքի

Հոգիի Ազատութեան եւ Արդարութեան Տարեկան Շքանշանը ՍԱՐԳԻՍ ՀԱՏՊԱՆԵԱՆԻ Ֆրանսահայ Հասարակական,

քաղաքական գործիչ, Արցախեան ազատամարտի մասնակից, Հրանդ Տինքի Մանկութեան ընկեր, դասընկեր եւ ուղեկից, ձեռամբ՝ Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ Տոքթ. Մուրատ Մարք Զեօշքերի, Լիոնի մէջ, Ֆրանսա, նախ քան Ոգեկոչման ձեռնարկի կայանալը, իր հիւանդութեան պատճառով որ արգիլեց զինք Լոս Անճելըս ճամբորդել: 19726 Sherman Way, Winnetka, CA

Հիւրասիրութիւն՝ Հրանդ Տինք սրահին մէջ

ԳԷՈՐԳ ԱԹԸՆԸՁԵԱՆ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԱԾ ԵՐՈՒՄԱԴԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ



Բարերար Գեորգ Աթընըզեան ծնած է Տիգրանակերտ, ուր անցուցած է իր մանկութեան եւ պատանեկութեան դժուարին օրերը: Օժտուած հայ մարդու ձեռներէջ ոգիով եւ աշխատասիրութեամբ՝ ան յաղթահարած է կեանքի սկզբնական դժուարութիւններն ու խոչընդոտները եւ կրցած է հասնիլ բացառիկ յաջողութիւններու:

Գաղթած է Միացեալ Նահանգներ 1980 թուականին եւ անմիջապէս լծուած առեւտրական գործի: Այդ ճիւղին մէջ հետզհետէ յառաջդիմութիւններ արձանագործ է շնորհիւ իր բնածին տաղանդին եւ չարքաշ աշխատանքին: Իր աշխատանքին քաղած ճոխ արդիւնքը միայն ինք իր անձին համար չէ սեփականացուցած, այլ առաջին օրէն իսկ՝ տոգորուած քրիստոնէական ոգիով՝ ուզած է ուրիշներ եւս բաժնեկից դարձնել իր արդար վաստակին: Սկսած է օգտակար ըլլալ հայ եւ օտար հաստատութիւններու եւ իր գաղութին մէջ ճանչցուած է որպէս «բարերար»:

Ամերիկաբնակ հայերու եւ ամերիկացիներու աչքէն աննկատ չէին կրնար անցնիլ անոր բարերարութիւնները, որոնց համար 2010 թուականին Պրն. Աթընըզեանին շնորհուեցաւ The Ellis Island Medal

of Honor շքանշանը: Այդ պատուին կ'արժանանան Միացեալ Նահանգներ գաղթած անհատներ որոնք կարեւոր նպաստ բերած են եւ կը բերեն ամերիկեան կեանքին: Իսկ 1998 թուականին՝ երջանկալիշատակ Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր սրբատառ կոնդակով շնորհած էր «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանը առ ի գնահատութիւն Մայր Աթոռ Սգ էջմիածնի եւ Հայցք Առաքելական եկեղեցիներու ի նպաստ անոր ըրած բարերարութեանց:

2000 թուականին երբ Պրն. Աթընըզեան կը գտնուէր Մ. Երուսաղէմ՝ կատարելու համար հայ քրիստոնէի իր պարտականութիւնը, պիտի այցելէր նաեւ Ս. Յակոբեանց վանքը: Սրբատեղեաց մէջ՝ ի տես հայոց վայելած լայն իրաւունքներուն, իր մէջ Չերմ փափաք մը կը ծնի օգտակար ըլլալու հայ Երուսաղէմին եւ անսալով այդ ներքին զգացումին՝ ան նորոգել կու տայ Լուսարարապետարանը, պատմական հին եւ շքեղ շէնք մը, որ կը տիրապետէ վանքի մեծ բակին:

Թեմական մակարդակի վրայ եւս մեծ յարգանքի արժանացած է Պրն. Գեորգ Աթընըզեան: Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թե-

Շար.ը էջ 19

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ԼԵՁՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ Օգոստոս 2018



Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքի 2017 թուականի մասնակիցները

Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան Վենետիկի «Studium Marcianum» հաստատութեան հետ գործակցաբար, կազմակերպած Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը տեղի պիտի ունենայ Յուլիս 30-Օգոստոս 14 թուականներուն: Քննութիւնները՝ Օգոստոս 14ին կէսօրէ վերջը: Ժամանում՝ Յուլիս 29ին, մեկնում Օգոստոս 15-16ին:

Դասընթացքը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէն մինչեւ յառաջադէմներ: Դասերը տեղի կ'ունենան Երկուշաբթիէն Շաբաթ, Ուրբաթ, օրը հինգ պահ՝ առաւօտեան: Դասընթացքի ամբողջական տեւողութիւնն է 5 դասաժամ: Դասերու ներկայութիւնը պարտադիր է:

Մասնակցութեան համար պահանջը՝ 18-ամ նուազագոյն տարիքն է 18: Հնարաւոր բացառութեան համար պէտք է մասնաւոր դիմում կատարել դասընթացքի վարչութեան: Դիմումները պէտք է կատարել անձամբ եւ գրաւոր, նշելով միշտ հեռախօսի եւ էլքրային (e-mail) հասցէ մը: Դասընթացքին զուգահեռ տեղի պիտի ունենան մշակութային այլեւայլ ձեռնարկներ: Փափաքողներուն կէսօրէ վերջերը, ձրիաբար պիտի աւանդուին նաեւ դուղուկի, հայկական պարերու եւ խոհանոցի

դասեր: Արձանագրութեան սակն է՝ 800 եւրօ կամ համապատասխանը՝ տարարժոյթով ըստ օրուան սակին: Այս գումարին 500 եւրօյի բաժինը պէտք է վճարուի կանխաւ՝ մինչեւ Փետրուարի 28ը: Այս թուականէն վերջ այդ սակը 550 եւրօյի պիտի բարձրանայ մինչեւ Յունիսի 30ը, որ արձանագրութեան համար վերջին պայմանաժամն է: Արձանագրութեան մնացեալ մասը կը վճարուի անպայման մուտքի օրը: Վարկաթղթային վճար (credit card) չ'ընդունուիր: 10% գեղջ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, գոնէ երկու անգամ: Նոյն գեղջը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մէկուն (ծնողք, քոյր, եղբայր, կողակից): Կատարուած վճարումը որեւէ պատճառով չի վերադարձուիր, բացի հաւաստի եւ ճամբորդութիւնը արգիլող հիւանդութեան պարագայէն: Դրամատնային փոխանցումով (bank transfer) վճարելու համար, յետ դիմումի ընդունելութեան՝ քարտուղարութիւնը պիտի ուղարկէ դրամատնային հաշուի հարկաւոր տեղեկութիւնները, (հաշուեհամար, IBAN

Շար.ը էջ 19

INNOVATIVE

Designs Manufacturing, Inc.

idmifurnishings.com

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԱԲԵՏՈՒՄ ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՆԴԵԱՆ



ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Դեկտեմբեր ամիսը իր տօնական զգեստաւորումով եւ Քրիստոնէական ներշնչումով զարդարած էր Հայ Քոյրերու վարժարանը: Հոն հանգամանօրէն տեղադրուած էր գեղեցիկ կանաչ եւ պսպղուն եղեւինը Մանուկ Յիսուսի մսուրով եւ ամէն կողմէ հնչող Ծննդեան շարականներով, ամանորեան խանդավառ երգերով: Այս բոլորը ամբողջ Դեկտեմբեր ամիսը կրկնուելով դրոշմուեցան աշակերտներու մտքին ու հոգիին մէջ, որպէսզի այդ միջոցառումը փոխանցեն նաեւ իրենց տուններէն ներս եւ դառնան Ծնունդի եւ նոր տարուան ընտանեկան սեղաններու վրայ արտասանուող եւ փոխանցուող պատգամ մանուկներու եւ պատանիներու բերնով:

Այս միջոցառումի մէջ Հայ Քոյրերու վարժարանը իր քրիստոնէական դատարարական գործնական աշխատանքը իրագործեց զանազան ելոյթներով եւ հանդէսներով, աւետելով Մանուկ Յիսուսի ծնունդը, Քրիստոնէութեան ծնունդը՝ փրկելու մարդկութիւնը յաւիտենական կորուստէ:

Դեկտեմբեր 12ին պաշտօնապէս Հայ Քոյրերու վարժարանի սրահէն ներս տեղի ունեցաւ Տօնածառի լուսաւորումը, առաւօտեան աղօթքի արարողութենէն անմիջապէս ետք, երբ Մանկապարտէզի աշակերտները Ծննդեան շարականով աւետեցին Մանուկ Յիսուսի ծնունդը եւ ծափող ինքններով լուսաւորեցին տոնածառը եւ մսուրը:

Այս տարի Հայ Քոյրերու վարժարանը գերազանցեց ինքզինք ներկայացնելով Հանտըլի «Մեսսիան»՝ "Christmas Messiah for Junior voices" գործի հետեւողութեամբ:

Չորրորդ, Հինգերորդ եւ վեցերորդ դասարանի աշակերտներն են, որոնք ամբողջ ամիս մը փորձելէ սորվելէ եւ պատրաստուելէ ետք ներկայացան հանրութեան բացառիկ ելոյթով մը: Դեկտեմբեր 17ի առաւօտեան յաւարտ Սուրբ Պատարագի Կլենտէյլի Կաթողիկէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Աթոռանիստ Եկեղեցոյ մէջ՝ ներկայութեամբ հիւսիսային Ամբերիկայի եւ Գանատայի կաթողիկէ հայոց Առաջնորդ՝ Արհիպպատի ԵՏԻ Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեանի, եկեղեցոյ ժողովրդապետ՝ հայր Բարսեղ Պաղտասարեանի, Առաքինազարդ քոյրերու, ուսուցիչներու, ծնողներու եւ հոծ բազմութեան տեղի ունեցաւ բացառիկ եւ տպաւորիչ ելոյթ մը:

Եկեղեցիէն ներս խորհրդաւոր

մուտք գործեցին չորրորդ դասարանի աշակերտները, որոնք բոցավառող մոմերու լոյսին ներքեւ, շարականի երգեցողութեամբ իրենց տեղերը առին խորանին վրայ: ամբողջ երեսուն վայրկեան եկեղեցին ցնծաց Ծննդեան շարականներով, երգերով իրենց մեղմիկ եւ անմեղ մեկնաբանութիւններով աւետեցին աշխարհի փրկչին՝ Մանուկ Յիսուսի Ծնունդը, ներկաներու հոգիները պարուրելով խաղաղութեան եւ հաճութեան զգացումով, ապա նոյն ձեւով մեկնեցան ներկաներուն փափախով «Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ» անժամանցելի աւետիսը:

Խորանը անմիջապէս տեղի տուաւ յաջորդ խումբին, որոնք ներկայացուցին հռչակաւոր Հանտըլի «Մեսսիան»՝ "Christmas Messiah for Junior voices": Իւրաքանչիւր աշակերտ իր բաժինը այնքան կատարեալ սորված էր, այնքան լաւ կ'արտայայտուէր եւ իւրաքանչիւր մեներգող այնքան լաւ կը մեկնաբանէր իր բաժինը, որ ամբողջութիւնը ներկայացաւ որպէս անթերի ներկայացում հազարաւոր տարիներ առաջ պատահած բացայտմէական երկնային խորհրդաւոր դէպքի մը՝ Յիսուսի Ծննդեան, որ միաժամանակ զարմացուց եւ հիացուց ներկաները:

Արցունքը կարելի չէր զսպել ի տես տասնամեայ պատանիներու հաւատքով ու անմեղութեամբ արտասանած բառերուն, կարծես այդ տօնական միջոցառումի մէջ մէկ մէկ հրեշտակներ ըլլային երկինքէն իջած՝ աւետելու քրիստոնէական մեծագոյն դէպքը՝ քրիստոսի մարդկութիւնը:

Ելոյթի աւարտին ներկաները լիցքաւորուած քրիստոնէական խորհուրդով եւ բաւարարուած տօնական օրերու շունչով վերադարձան տուն բազմապատկուած հաւատքով ու գոհունակութեամբ՝ Հայ Քոյրերու վարժարանի ջանքած Քրիստոնէական գործօն դաստիարակութեան:

Ապրիլի պատանիները, որոնք ներկայացուցին երժշտական այս գործը, ինչպէս պիտի ընէին երաժշտական վարժարանի մը աշակերտները: Այս բոլորը կը պարտին իրենց երաժշտութեան Ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեանին, որ իր երաժշտական հմտութեամբ, գիտելիքներով եւ կազմակերպչական կարելիութիւններով այս տարի եւս ներկայացաւ գերազանց յայտագրով:

Դեկտեմբեր 21-ի յետմիջօրէին տեղի ունեցաւ Մանկապարտէզի Ծննդեան աւանդական հանդէսը:

վարժարանի Դանիէլեան սրահէն ներս ծնողներու եւ տնօրէնութեան ներկայութեան: Աշակերտները մեծ հմտութեամբ ներկայացուցին ոչ միայն քրիստոնէական երգեր, շարականներ եւ աղօթքներ, այլ նաեւ գործնականօրէն ներկայացուցին Յիսուս Մանուկի Ծննդեան պատմութիւնը, որուն գլխաւոր մասը կը ներկայացնէ Մանկապարտէզի աւարտական դասարանը: Հիանալի պատկեր մըն է, դիտել մանուկներու անմեղ եւ հարազատ ներկայացումը Ծնունդին՝ Քրիստոնէական կրօնքի մեծագոյն տօնին, ուր Աստուածոյ մարդկայնութիւնն է որ կ'իրականանայ ու կը ներկայացուի միայն վեց տարեկան մանուկներու կողմէ: Այս տարուան Մարիամը, կը ներկայացնէր վանիա Սամուէլեանը եւ Հայր Յովսէփը կը ներկայացնէր Մայքլ Թովմասեանը եւ եղիսաբեթը՝ Էլիզապէթ Ֆրաթ, որքան տպաւորիչ էր անոնց խօսակցութիւնը, շարժուձեւերը, արտայայտութիւնը եւ տակաւին բեմական հմտութիւնը, ինչպէս նաեւ պատմութիւնը ամբողջացնող բոլոր միւս դերակատարները՝ հրեշ-

րանի աշակերտներու ելոյթները, որոնք դասարան առ դասարան ներկայացան եւ տիրապետող շենշող եւ տօնական օրերու ուրախ միջոցառումի մէջ երգեցին, արտասանեցին, երբեմն պարեցին, գործածեցին երաժշտական այլազան ձայնային գործիքներ եւ որպէս գեղեցիկ ծաղկեփունջ զայն նուիրեցին իրենց ծնողներուն:

Յաջորդ օր վարժարանի Դանիէլեան սրահը աւելի խանդավառ եւ ուրախ էր այս անգամ Մանկապարտէզի բոլոր փոքրիկները իրենց ծնողներուն հետ տօնական զգեստներով պատրաստ կը սպասէին նախաճաշելու Կաղանդ Պապային հետ:

Հաճելի էր եւ ուրախութիւնը վարակիչ, ամէն կողմ ուտելիքներ, խաղալիքներ, երգ պար եւ հարկական կաղանդ. վստահ որ փոքրիկներուն համար անմոռանալի փորձառութիւն մըն էր ինչպէս նաեւ ծնողներու համար բացառիկ օր:

Հայ Քոյրերու վարժարանի աւանդութիւնն է Դեկտեմբեր ամսուան գոծունէութիւնը նուիրել Մանուկ Յիսուսի Ծննդեան Սուրբ



տակներ, մոգեր, հովիւներ եւ բոլորը որոնք յաջողցուցին թատրոնը՝ պահ մը ներկաները փոխադրելով Պաղեստինի՝ Գալիլիոյ շրջանի Նազարէթ քաղաքը: Հրեշտակներու ծննդեան աւետումէն վերջ Մանկապարտէզի բոլոր աշակերտներու միասնաբար երգեցողութիւնը ամբողջացուց պատկերը: Երգերու պատրաստութիւնը արդիւնքն է վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի՝ Վարդուհի Պաղտասարեանի եւ դասարանի ուսուցչուհիներուն հետեւողական եւ բծախնդիր աշխատանքին:

Նոյն օրը Մանկապարտէզի հանդէսին յաջորդեց նախակրթա-

Տօնին՝ դրսեւորելով աշակերտներու քրիստոնէական դաստիարակութիւնը՝ սքանչելի թատրոններով եւ երգախումբով, որոնք ամէն տարի ունենալով նոյն թեման՝ կը ներկայանան տարբեր ոճով եւ յատուկ ներկայացումներով:

Այսպիսով 2017ի Դեկտեմբեր ամիսն ալ յաջողութեամբ պսակուեցաւ Հայ Քոյրերու վարժարանէն ներս ծրագրուած յայտագրերը իրականացնելով լիարժէք եւ կատարեալ ձեւով:

Վարձքը կատար բոլոր նուիրեալներուն:

Շնորհակալութիւն բոլոր ծնողներուն եւ նուիրատուներուն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

ԱՆԿԱՆ ԿՆՈՋ ԿԵՑ ՍԿՉԲՈՒՆՔ

Ժամանակն է գործելու: Սպասել, որ իրավիճակը կը հարթուի ինքն իրեն, բնականաբար գրաւիչ է, սակայն հազիւ թէ արդիւնքի հասնիս, եթէ ուղղակի ձեռքերդ ծալած նստիս: Նոր աշխատանքի կ'անցնիս, իսկ գործատունն չ'անապարեք հեռաձայնելու քեզի: Դո՛ւն հեռաձայնէ, ցոյց տուր հետաքրքրուածութիւնդ, այդպէս կը հանգստացնես նաեւ ջիղերդ: Ընկերուհիներդ ո՛չ մէկ ձեռով չե՞ն կրնար որոշել՝ ո՛ւր երթալ Ուրբաթ երեկոյեան:

Դո՛ւն որոշէ: Եթէ չհամաձայնի, ուրիշ ընկերակցութիւն գտիր այդ երեկոյին համար: Իրավիճակը վերցուր ձեռքդ եւ պիտի գարմանաս՝ որքան արագ ամէն ինչ պիտի հարթուի:

Մի՛ մտածեր, այլ՝ գնահատէ՛: Եթէ քեզի հանգիստ չի տար այն միտքը, թէ ինչ կը մտածեն քու մասին նոր ընկերութեան մէջ կամ առաջին հանդիպման ընթացքին, կը նշանակէ՝ քու շահերդ կը բխի շտկել ատիկա: Ի վերջոյ, ինչո՞ւ պէտք է գնահատես միայն քեզ, դո՛ւն նոյնպէս ունիս ատոր իրաւունքը: Հան գըստացիր, ուսումնասիրէ նոր ընկերդ կամ գործընկերներդ, միաժամանակ որոշէ՝ իսկապէ՞ս անոնք կը հետաքրքրեն քեզ, եւ կ'արժէ՞ շարունակել կապը:

Պատրանքներ մի՛ ստեղծեր: Եթէ նոյնիսկ քեզի թուացած է, որ նոր երկրպագուդ հմայուած նայած է քեզի, իսկ անոր ամբողջ մարմինը մեծ հետաքրքրութիւն ցուցաբերած է քեզի հանդէպ, ի՞նչ իմաստ ունի ատիկա, եթէ ան մօտենալու ո՛չ մէկ փորձ ըրած է եւ նոյնիսկ չէ առաջարկած միասին ընթերցել: Պէտք է ուրիշներէն սպասել այն՝ ինչ դուն կ'ուզես: Աշխատիր այն պէս

ընել, որ տրամադրութիւնդ ու ինքնագնահատականդ կախուած չըլլան ուրիշներու որոշումներէն: Դո՛ւն կառավարէ տրամադրութիւնդ: Ձգացմունքային կայունութեան գլխաւոր բանալին ինքնուրոյն տրամադրութիւնը բարձրացնելու ունակութեան մէջ է: Քեզ կոպտած են խանութին մէջ, աշխատանքի ընթացքին չե՞ն գնահատած նոր հագուածքդ կամ տնօրէնը նկատողութիւն ըրած է:

Մի՛ նեղանար: Ատոր համար հագարաւոր պատճառներ կրնան ըլլալ, հնարաւոր է՝ այդ մարդոց օրը լաւ չէր սկսած: Թոյլ մի՛ տար, որ տհաճ մանրութիւնները փճացնեն տրամադրութիւնդ, իսկ որպէսզի օգնես դուն քեզի պահպանելու ոգեշնչուած, յիշէ հաճելի բաներ, որոնք կը սպասեն քեզի մօտ ապագային, օրինակ՝ հանդիպումը պիտի իրէդ հետ կամ ընկերուհիներով թատրոն երթալը:

Սիրէ՛ դուն քեզի: Ուրիշներուն սէր տալով՝ մի՛ մոռնար դուն քեզ: Ան որ կը սիրէ ու կը գնահատէ ինքզինքը, կը գրաւէ մարդոց ուշադրութիւնը եւ անպայման ուրիշներուն համար ալ կը դառնայ սիրելի: Կարելոր է, թէ ի՞նչ կը մտածես դուն քու մասին եւ ինչպէ՞ս կը վերաբերիս դուն քեզի:

Աշխատիր հեռու մնալ նախանձի զգացումէն: Ուրիշներուն հետ համեմատուիլը բացարձակապէս ձախողած ռազմավարութիւն է: Յիշէ՛, որ դուն՝ դուն ես, իսկ շրջապատի մէջ ուրիշ մարդիկ կան՝ կեանքի տարբեր հայեացքներով ու հնարաւորութիւններով: Պէտք է կեդրոնանալ ուրիշներու յաջողութիւններուն վրայ, աւելի լաւ է՝ նայիլ քու կեանքիդ եւ մտածէ՛ ինչը քեզի համար հաճելի է այնտեղ:

ՍԻՐՈՂ ԿԻՆԸ ԻՆՉՈ՞Վ ԿԸ ՏԱՐԲԵՐԻ ՉՍԻՐՈՂԵՆ

Սիրող կինը միշտ բաց է սիրելիի հետ, ան ձկուն է: Ատիկա չի նշանակեր, սակայն, որ ան կուրօրէն կը սիրէ եւ այդ պատճառով պատրաստ է որեւէ պայմանով սիրելիին հետ ըլլալու:

Կինը կը պահպանէ իր արժանութիւնը եւ ոչ մէկուն կ'արտօնէ ոտնահարել գայն: Ան կը պահպանէ իր կանացի արժանապատուութիւնը եւ նոյնը կ'ակնկալէ սիրելիին:

ձկուն կը նշանակէ, որ կինը կրնայ 100 եղանակ մտածել սիրելիի հետ ըլլալու համար, սակայն, միաժամանակ չկոտորելով անոր ռազմավարական կենսական ծրագիրները եւ չխախտելով սահմանները:

ձկուն կը նշանակէ, որ ան երբեք չի վնասեր անոր, թէ՛ իր գործողութիւններով, թէ՛ անգործութեամբ:

ձկուն կը նշանակէ, որ կինը ամէն ինչ կ'ընէ՝ կը փոխէ շրջապատը, ապրելու վայրը, երկիրը եւ նոյնիսկ հաւատքը՝ սիրելիի հետ ըլլալու համար: Ոմանց կրնայ թուիլ, որ ատիկա արդէն չափազանց է, սակայն այդ է իրական կանացի ճիշդութիւնը:

Ան պատրաստ է վերակազմաւորուելու, ան պատրաստ է զոհաբերելու, որովհետեւ ան կը

սիրէ:

Անտարբեր, սիրելի դադրող կինը կը տարբերի միւսէն՝ նոյնինքն այդ ձկունութեան բացակայութեամբ:

Այդ ձկունութիւնը անոր մօտ կը փոխակերպուի կանացի յամառութեան, խաղի: Միաժամանակ ան հաշուի չ'առնելով տղամարդու կենսական ծրագիրները, քանի որ անոր մտքերը տարուած են միայն սեփական ցանկութիւնները իրականացնելու վրայ:

Խօսքը չի վերաբերիլ տղամարդուն «ծառայելու» մասին: Սակայն, կարելոր է պահպանել տղամարդու եւ կնոջ կեանքի նպատակներու հաւասարակշռութիւնը, որ հնարաւոր է միայն սիրող կնոջ եւ սիրող տղամարդու միջեւ:

Երկրորդ՝ սիրող կինը միշտ ողջամիտ է: Ան միշտ հաւատարիմ է իր տղամարդուն: Նոյնիսկ եթէ ատիկա չի պահանջուի, նոյնիսկ եթէ տղամարդը անոր որոշ ազատութիւններ կու տայ:

Չսիրող կինը միշտ այլ, աւելի շահաւէտ տարբերակներ կը փնտռէ իրեն համար եւ այդ տարբերակի առկայութեան պարագային կը դաւաճանէ՝ առանց մտածելու:

ԱԲԵԼԻ ԼԱԲ ԿԻՆ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՐԿՈՒ ՊԱՐՉ ՄԻՋՈՑ

Լաւ կինը նաեւ ուշադիր եւ իմաստուն մայր է: Կինը պատրաստ է սիրելու իր գաւակները, ինչպիսին ալ ըլլան անոնք, իսկ տղամարդու համար կարելոր է, որ իր գաւակները արժանաւոր մարդ դառնան: Իսկ ո՞վ է գաւակներու առաջին դաստիարակը:

Ամէն պարագայի՝ մայրը: Եւ երբ ամուսինը տեսնէ, թէ ինչպիսի համբերատարութեամբ իր կինը կը լուծէ գաւակներուն խնդիրները, ուրախութեամբ կը խաղայ անոնց հետ, կը հաշտեցնէ անոնց, կը սորվեցնէ ինքնուրոյն պատրաստել դասերը: Վստահ եղէք, որ իսկական տղամարդը պիտի գնահատէ այդ բոլորը:

Յարգեցէք ձեր ամուսինը: Տղամարդիկ այնքան ալ չեն ուզեր խոստովանիլ, բայց առանց կանանց յարգանքին՝ չեն կրնար ապրիլ: Երբ կը կարծեն, որ կինը կը հաւատայ իրենց ուժերուն, այնպիսի

զգացողութիւն կ'ունենան, կարծես պատրաստ են նուաճելու ամբողջ աշխարհը: Բայց երբ ցոյց կու տան, որ իրենք արժանի չեն կիներու վստահութեան, շատ կը վստանան: Նոյնիսկ այն պահերուն, երբ ամուսինը արժանի չէ կնոջ յարգանքին, ուշադրութեամբ շրջապատեցէք զինք եւ ան պիտի դառնայ ուժեղ բնաւորութեամբ քաջարի մէկը:

Տան մէջ բոլոր պայմանները ստեղծեցէք դրական տրամադրութեան համար:

Կինը կրնայ ամբողջ ընտանիքին համար տրամադրութիւն ապահովել, ուրեմն թող այդ տրամադրութիւնը ներդաշնակ ըլլայ: Այնպիսի մթնոլորտ ստեղծեցէք, ուր ներդաշնակօրէն պիտի միաւորուին ոգեշնչուած, ծիծաղը, կարգապահ-հոլիստիկը, աշխատասիրութիւնը, ուրախութիւնը, սէրը:

ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ԻՆՔՆԱՎԱՍՏԱՐ ԸԼԼԱԼԸ ԻՐԱՔԱՆՉԻՐ ԿՆՈՋ ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆ Է

Կանացի գեղեցկութիւնը գէնք է: Գեղեցիկ եւ ինքնավստահ ըլլալը իւրաքանչիւր կնոջ ցանկութիւնն է, սակայն, մարմնի եւ արտաքինի խնամքը պէտք է համալիր ըլլայ: Ինչի՞ մասին շատ անգամ կը մոռնան կիները.

1) Առողջ եւ ամուր քունի: Ատիկա այն ժամանակն է, երբ մարմինը կրնայ հանգստանալ եւ վերականգնուիլ: Քունի ժամանակ մաշկը կը դառնայ աւելի հարթ եւ մետաքսեայ, կը լաւանայ իւթափոխանակութիւնը: Ատոր համար կարելոր է քունի եւ հանգիստի համար օրական ապահովել տասը ժամ:

2) Մերսման ընթացակարգերը: Մարմնի զարգացման փորձը՝ մերսման շնորհիւ՝ մեզի հասած է Արեւելքէն եւ տարածուած ու պահանջուած դարձած քանի մը տարուան ընթացքին: Գոյութիւն ունին մերսման տարբեր ձեւեր, սակայն, մարմնի գեղեցկութեան եւ ներդաշնակութեան համար լաւ է մարմնի ամբողջական եւ դէմքի մաշկի մերսումը: Աւելի լաւ արդիւնքի հասնելու համար կ'օգտագործուին տարբեր եթերային կամ գեղագիտական իւղեր: Այս ընթացակարգը դրական ազդեցութիւն կ'ունենայ եւ արտաքինի, եւ ընդհանուր առողջութեան վրայ: Սակայն, պէտք է յիշել, որ մերսումը արդիւնք կու տայ համալիր ընթացակարգը անցնելէ ետք եւ անխմաստ պիտի ըլլայ փոփոխութիւններ ահնկալելը՝ քանի մը ընթացակարգէ ետք:

3) Հեղուկի: Լիարժէք եւ բնական առողջութիւն ունենալու համար կինը պէտք է օրական մէկ լիթր ջուր խմէ: Անոր մէջ կարելի է աւելցնել կիտրոնի հիւթ, մեղր: Ջուրը մարմնին մէջ կ'արթնցնէ բոլոր գործընթացները եւ կ'օգնէ աւելի շուտ հանելու շրջանները: Կատարեալ տարբերակ է սենեակային ջերմաստի ճանի ջուրը: Պէտք է նշել, որ ջուրի ջերմաստիճանը կարելոր դեր կը խաղայ: Եթէ առաւօտեան օգտագործէք պղ ջուր, այնուհետեւ մեթապոլիզմը կը կանգնի եւ անօթները կը սկսի նեղնալ:

4) Վերջին գործօնը՝ ինքնագարգացումը եւ սեփական աշխարհայեացքի ընդլայնումը: Կինը ընտանիքի մէջ կը մոռնայ, որ ինք անձ է եւ առաջին հերթին պէտք է հոգ տանի ինքն իր մասին: Այս բոլորը կը ներառէ նաեւ ինքնագարգացումը, որ կրնայ տեղի ունենալ թէ՛ հետաքրքրական դասընթացներու յաճախելով, թէ՛ սիրած զբաղումը ունենալով:

Այսպէս, թէ այնպէս, այս ամէնը կ'օգնէ ներդաշնակութիւն գտնելու եւ հասկնալու շրջապատող աշխարհը:

Իւրաքանչիւր կին արժանի է գրաւիչ ըլլալու եւ արտաքինով, եւ ներքինով, իսկ ատոր համար անհրաժեշտ է մշտապէս աշխատիլ ինքն իր վրայ եւ զարգացնել ոգին, մարմինը ու գիտակցութիւնը, միայն այդ ժամանակ կարելի է ունենալ դրական եւ հարիւր տոկոսանոց արդիւնք:

Ղափամա

(Յեղինէի բաղադրատոմսով)

Բաղադրութիւն. 3+ քլ դդում, 3 գաւաթ երկար բրինձ (կարելի է բրինձը աղա ջուրի մէջ ձգել 5-6 ժամ, որ եփելու ժամանակ հատիկ-հատիկ մնայ), մէկ խնձոր՝ մանրուած, 1 գաւաթ չամիչ, 0.5 գաւաթ սալորաչիր, 0.5 գաւաթ ծիրանաչիր, 0.5 գաւաթ կտրտուած ընկոյզ կամ նուշ, քիչ մը աղ, կա սիւս, 1-2 ապուրի դգալ մեղր, 1-2 ապուրի դգալ իւղ կամ կարագ:

Դդումի վերի բաժինը՝ կափարիչի մնաց՝ բանալ, դդումը պարպել, 1 ապուրի դգալ մեղր ու քիչ մը հալած կարագ լեցնել ու ամբողջ դդումը մեջքէն պատել: Բրինձը եռալէն անմիջապէս ետք կրակը անջատել, սուզել ու ձգել որ պաղի: Աւելցնել մնացեալ բաղադրութիւնը, խառնել ու լեցնել դդումի մէջ, կափարիչով փակել ու դնել արդէն տաքացած փուռի մէջ:

Եփել 180°C տաքութեամբ փուռի մէջ, 45-60 վայրկեան կամ մինչեւ դդումը դանակով հանգիստ ծակուի: Բարի ախորժակ:



SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

Գիտական Արեւմտահայերէնը

Շարունակուած էջ 13-էն

կրնայ ըսուիլ վերջին հիմն տարիներու ինչ ազդեցութիւն ունեցաւ մեր վրայ եւ դէպի ո՞ր կ'երթանք:

Ա.Տ.- Կը թուի թէ նախ պատմական ընթացք մը կայ Միջին Արեւելքի քրիստոնեաներու ինքնորոշման: Կ'ուզեմ ըսել որ, երբ իսլամական գերիշխանութիւն կար քրիստոնեաներու թիւը չէր նուազած: Ընդհակառակը ծաղիկեցաւ թիւը: Այսօրուան դրութեամբ համոզուած եմ, թէ արաբ-իսլամական քաղաքական մտքի մէջ շատ յստակ է, թէ քրիստոնէութիւնը պէտք է մնայ Միջին Արեւելքի մէջ: Ծայրայեղ իսլամականութիւնը միզուցէ ուրիշ բան մտածել, բայց այդ մտածածը հեռատես չէ: Բարեխառն իսլամութիւնը կը մտածէ, որ քրիստոնէութիւնը պէտք է մնայ Միջին Արեւելքի մէջ: Պէջրութի մէջ յաւելուեալ ճիշդ կայ այս ուղղութեամբ: Լիբանանի մէջ քրիստոնեաներս կը վայելենք իրաւունքներու կէսը: Խորհրդարանի 128 պատգամաւորներու 64-ը քրիստոնեաներ են: Այսօր կրնայ ըլլալ, որ միջազգային խնդիրներու բերմամբ թիւը նուազի, ինծի կը թուի որ պիտի գան օրեր, ուր մենք մեր տեղը պիտի պահենք Միջին Արեւելքի մէջ:

Ե.Տ.- Տնտեսական առումով ինչ պէ՞տք է ընթացքը:

Ա.Տ.- Փորձեմ տնտեսական պատկեր պատկեր մը տալ: Երբ 1920-ականներու սկիզբը Պէջրութ եկանք, աղքատ էինք: Ուրբանացներէն հասած սերունդն էր, որ արհեստներ գիտէր: Ատաղձագործ էր, կամ կօշկակար եւ այլն: Ահա այդ գանգուածը 40-ական տարեթիւերուն սկսաւ դրամ շահիլ: Պատերազմի պատճառաւ սահմանները փակ էին եւ ներքին շուկային կարիքները հոգալու համար արտադրութիւն կը պահանջուէր: Այդ տարիներուն լիբանահայութիւնը բազմաբեւեռ վիճակ մը ունի: Թէ մեքենագիտական մասնագիտութիւն, թէ ուսումնական մասնագիտութիւն եւ թէ արհեստներ: Այս ձեւով 1950-ականներու վերջերուն մենք յաջողեցանք մտնել կեդրոնական Պէջրութի մայր շուկաները: Դժբախտաբար պատերազմին Պէջրութի այդ կեդրոնական շուկաները քարուքանդ եղան: Այն ատեն ոսկերչութիւն կամ լուսանկարչութիւնի նման արհեստներու մէջ մենք գերակշիռ տեղ ունէինք, ոսկերչութիւնը պատերազմի բերումով անցաւ Պուրճ Համուտ, իսկ լուսանկարչութիւնը Համուտ գնաց: Յետոյ 90-ականներուն, երբ Պէջրութի շուկաները վերականգնիլ սկսան մենք նախկին թիւով չկանք հիմա այդ շուկաներուն մէջ: Երկրորդ կարեւոր երեւոյթը այն է, որ 20-ականներուն եկանք, երիտասարդները յառաջացուցին, հիմնեցին գործարաններ, յաջորդ սերունդը, իրենց գաւազները պարզապէս, որ պիտի ստանձնէին իրենց հօր գործը եւ քայլ մը առջեւ պիտի տանէին, այդ սերունդը պատերազմին հանդիպեցաւ: Ես չեմ բացարձակացներ, բայց այս է երեւոյթը: Եւ պատճառ դարձաւ, որ այդ գործերը դադարին: Վերադառնանք թէ մենք այսօր ինչ վիճակի մէջ ենք: 2002-ին կարեւոր հարցախոյզ մը կար: Ըստ այդ հարցախոյզին Լիբանանի հայ ընտանիքներու մէկ երրորդը ինքնաբաւ է, մէկ երրորդը ինքնաբաւ է, այն պատճառով որ դուրսի իր որդին կամ ազգականը դրամ կը ղրկէ եւ այդպէսով

կ'ապրի: Իսկ մէկ երրորդը ինքնաբաւ չէ: Հետեւաբար դուն չես կրնար ահնկալել, որ այդ մէկ երրորդը ինքնաբաւ չէր որ վարէ Լիբանանի մշակոյթը: Մշակոյթը, դպրոցը ուրիշ տեսակ ֆինանսաւորում կ'ուզէ: Պէտք է աւելցնել ուրիշ բան մը, 1990-ին երբ որ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը հռչակուեցաւ, այն հայկական դրամները, որ Միջին Արեւելք կու գային, սկսան ուրիշ ուղղութեամբ երթալ: Չեմ քննադատեր, պարզապէս փաստը կը ներկայացնեմ: Գալուստ Կիւլպենկեան Հաստատութիւնը կամ ՀԲԼՄը նախկինին պէս ուշադրութիւն չեն դարձներ Միջին Արեւելքին: Միջին Արեւելքի հայն ալ տեսնելով, որ ապագան կայուն չէ, կը խուսափի ներդրումներ կատարելէ: Եզրակացնեմ ըսելով, թէ հայկական տնտեսական տարածքը, որ գոյութիւն ունէր 1975-էն առաջ, այսօր գոյութիւն չունի Լիբանանի մէջ: 1975-էն առաջ հայ մը կրնար պաշտօնակոչուիլ հայկական ընկերութեան մը մէջ, այսօր նուազ կարելի է: Ներկայիս պաշտօնէութեան կարեւոր մէկ մասը հայ միջավայրի մէջ չէ: Հետեւաբար կը շփուի օտար միջավայրի հետ: Նախապէս լիբանահայը այն բացառիկ անձն էր, որ կենցաղային առումով իր կեանքի տեւողութեամբ կրնար միայն հայերու հետ շփուիլ: Հիմա այդպէս չէ, հետեւաբար այսօր ինքնութեան համակերպումը կը փոխուի: Մի մոռնար որ ասոնք նոր սերունդ են: Յեղասպանութեան չորրորդ սերունդն է: Ասոնք ծնունդ են նաեւ կորիզային ընտանիքի: Առաջ ընտանիքը կ'ապրէր մեծ մայրով, մեծ հայրով: Այն ինչ որ չէր լսեր ծնողներէն, կը լսէր մեծ ծնողներէն: Այս բոլորը անշուշտ ինքնութեան կարեւոր գործօններ էին, որոնք այսօր նուազած են: Տնտեսականին կ'ուզեմ անդրադառնալ նաեւ: Այսօր հայկական տարածքը բաւական փոքրացած է: Ոսկերչութիւնը հիմնական արհեստ մըն է, որ խտացած է Պուրճ Համուտի մէջ: Մենք կը թափանցանք մարզի մէջ շատ խոշոր տեղ ունինք: Լիբանան երիտասարդներու կարեւոր թիւ մը կայ, որ մանկավարժութիւն կ'ուսանի: Մանկավարժութիւն ուսանած հայ երիտասարդը տեղական դպրոցներու մէջ գրկաբաց կ'ընդունուի: Մամուլի եւ հեռուստացոյցի մէջ դարձեալ հայեր կան:

Ե.Տ.- Դուք համալսարանի մէջ հայկական սփիւռք կը դասուանդէք: Ի՞նչ կը սորվեցնէք ձեր աշակերտներուն:

Ա.Տ.- Իմ դասաւանդած բաժինը 2011-ին հիմնուեցաւ: Մեր հիմնական նպատակը գիտաժողովներ կազմակերպել է: Մեր հիմնական ուշադրութեան առարկան ալ Միջին Արեւելքն էր: Նաեւ ժամանակագրութեան առումով ալ՝ յետդեռնեան տարիները: Անշուշտ որ ցեղասպանութեան անդրադարձանք, բայց այդ մեր ուշադրութեան միայն մէկ բաժինը կազմեց: Կարեւոր հաստատում մը կայ, եթէ գաղութը գոյութիւն չունի, այդ գաղութի պատմութիւնն ալ վերջացած է: Պատկերացուր որ 1920-էն մինչեւ 1975, 150 հազար հայ ժողովուրդ եղած է Լիբանան: Այդ 50 տարիներու ընթացքին ի՞նչ արտադրած է, երկրին ի՞նչ նպաստ բերած է, այս բոլորը պիտի գրուին: Ուրեմն որոշեցինք այս բոլորը լուսարձակի տակ առնել: Այս ծիրով առաջին գիտաժողովը հայրենիք-սփիւռք յա-

րաբերութիւններու շուրջ էր: Հայաստանի հանրապետութիւնը արդէն քսան տարեկան էր եւ պիտի տեսնէինք, թէ դէպի ուր կ'ընթանանք: Յետոյ անմիջապէս անցանք ինքնութեան նիւթերու: Ինքնութեան վերաբերեալ երկու գիտաժողովներ կազմակերպեցինք: Ուսումնասիրեցինք անդրասահմանային կապերը, ցանցը: Գործակցելու, հաղորդակցելու հսկայ կարելիութիւններ կան մեր դիմաց: Տեսանք որ հաղորդակցութիւնը կը կաղայ մեր մօտ հայ օժախներու միջեւ: Եկեղեցին իր կարգին էջմիածնական-Անթիլիասական բեւեռացում մը ունի: Նոյնպէս կուսակցութիւնները: Կը մնայ ինամիական յարաբերութիւն, որ լուրջ նշանակութիւն մը պիտի չունենայ: Հաստատութիւններու առումով հաղորդակցութիւնը չէ հասած ցանկալի մակարդակի: Ուրեմն փորձեցինք այս նիւթը ուսումնասիրել: Տարբեր տեղերէ մասնագէտներ հրահրեցինք: Փորձեցինք տարբեր փորձառութիւնները քով քովի բերել, որպէսզի տեսնենք թէ ինչ կարելի է ընել: 2014-ին գիտաժողով կազմակերպեցինք Լիբանանի հայերու մասին: Ով են, ուրկէ եկան, ինչ կ'ընեն եւ այլն: Յաջորդ տարին նոյնը ըրինք Սուրիոյ հայերուն եւ ապա Յորդանանի հայերու մասին: Անցեալ տարի Իրաքի հայերու մասին էր, իսկ այս տարի կը մտածենք Եգիպտոս, Եթովպիա եւ Սուտանի հայերու խնդիրներուն թափանցել: Ինչպէս կը տեսնենք հիմնական Միջին Արեւելքին ուղղուած կ'աշխատինք: Կ'ուզենք համայն հայութեան ուշադրութեան ներկայացնել ամբողջի այս բեկորները:

Կը պարզուի թէ կեդրոնը դասաւանդման հիման վրայ չ'աշխատիր: Ես կը դասաւանդեմ Լիբանանի հայերու պատմութիւնը, բայց միւս կողմէ կեդրոնը կ'աշխատի նաեւ արխիւացման նիւթով: Կ'օգնենք հետազօտողներու, որպէսզի անոնք աւելի խորանան իրենց ուսումնասիրած նիւթերուն մէջ: Նիւթեր կը հայթայթենք, ուղղութիւն կու տանք եւ կը քաջալերենք: Այս է մեր հիմնական աշխատանքը: Անշուշտ գիտաժողովները հատորներու վերածուած են:

Ե.Տ.- Պոլսահայութիւնը հայախօսութեան խնդիր մը ունի: Պէյրութի մէջ հայախօսութիւնը եւ գրաճանաչութիւնը ի՞նչ ընթացքի մէջ է:

Ա.Տ.- Երբ յօդուած մը կը գրէք, ապա կը կարդաք եւ բաներ մը կը փոխէք: Նոյն յօդուածը յաջորդ օր կարդալով կամ քանի մը օր ետք կարդալով դարձեալ բաներ մը կը փոխէք: Պատճառը այն է, որ լեզուն սահման չունի: Հետեւաբար չենք կրնար լրիւ գոհացած ըլլալ: Միշտ աւելի լաւի հաւանականութիւնը կայ: Կը կարծեմ, թէ արեւմտահայերէնը երեք վիճակ ունի: Առաջին արեւմտահայերէնը ժողովուրդի խօսակցական լեզուն է: Երկրորդը մամուլի հայերէնն է, ուր գրողը ստիպուած է գրական լեզու մը գործածելու: Երրորդ արեւմտահայերէն գիտական լեզուն է: Այն գիտական արեւմտահայերէնը, որով դուն ուսումնասիրութիւն կը կա-

տարես: Ընկերագիտական, փրկատիպական ուսումնասիրութիւններ կը կատարես եւ այնտեղ լուրջ դժուարութիւններ ունինք եզրերու խնդիրով: Գիտական արեւմտահայերէնը դժբախտաբար իր բովանդակային եւ իմաստային առումով չզարգացաւ: Այստեղ արեւելահայերէնը յատկապէս բառապաշարի առումով օգնութեան կը հասնի մեզ: Իսկ տակաւին գանազան նիւթերով արեւմտահայերէնն է, որ պիտի գորակցի արեւելահայերէնին:

Պէջրութի մէջ արեւմտահայերէնով դուն ուր որ ուզես կրնաս հասնիլ: Այսինքն եթէ ճամբադ մոլորեցար հայ մը կը գտնես եւ կը հասնիս տեղդ: Անշուշտ որ լեզուն Պէջրութի մէջ եւս կը նահանջէ: Մենք կը նկատենք, որ արեւմտահայերէնի մայրաքաղաքը Միջին Արեւելքն է: Սուրիան է, Լիբանանն է կամ Եգիպտոսը: Սակայն դժբախտաբար կը նահանջէ լեզուն: Սերունդը փոխուած է, համաշխարհայնացումը իր ծանր ազդեցութիւնը կը գործէ, հայերէնը սկսած է կծկուիլ, իբրեւ գործածական լեզու: Չեմ կրնար ըսել, որ իբրեւ տնային լեզու է, այնքան ատեն որ դուն ոլորտ մը ունիս, ուր հայերէն կարելի է գործածել, հայերէնը կը պահպանուի: Եթէ դպրոց չունիս, դպրոցական հայերէն բառապաշարը կը կորսնցնես եւ անոր տեղը կու գայ լրացնել արաբերէնը կամ որեւէ տեղական լեզու: Հետեւաբար շատ կարեւոր է, որ հայերէնի դրսեւորման դաշտը աւելնայ, քան պակսի: Այդ առումով մենք նահանջի մէջ ենք առանց այլ եւ այլի: Միւս կողմէն, բայց կրնամ ըսել, որ մեր մօտ կը պահպանուի հայերէնի նկատմամբ հետաքրքրութիւնը: Անշուշտ ոչ նախկին թափով, բայց կայ այդ հետաքրքրութիւնը: Ծնորհիւ Կիւլպենկեան հիմնադրամին մենք Հայկազեան համալսարանս յատուկ դասեր յառաջացուցինք մանաւանդ հայերէնի ուսուցիչներու, որպէսզի անոնք ալ աւելի բարելաւեն իրենց գիտելիքները մանկավարժական դրսեւորումը:

Ե.Տ.- Կ'ուզեմ քիչ մըն ալ անձնական հարցնել: Ձեր արմատները ուրտեղէ՞ն եմ:

Ա.Տ.- Մենք Հաճընցի ենք: Մեծ հայրս 1863-ի ծնունդ է: Երկու անգամ ամուսնացած է. Ջարդէն առաջ եւ Ջարդէն ետք: Մեծ մայրս ալ նոյնպէս: Երկուքն ալ նախապէս ամուսնացած եղած են եւ աւելի ետք իրաք ամուսնացած են: Մեծ մօրս հայրը դարբին եղած է: Հաճըն այսօր Սալիմպէյլի կը կոչուի: Իսկ կինս Չէյթուցի է: Իրենք Հայկազէն են: Ընտանիքը պահած է իրենց բարբառը: Մեր տան մէջ բարբառ չէր խօսուեր: Կարծեմ թէ Հայկազի մէջ բարբառ աւելի պահպանուած է, քան Պէջրութ: Մեծ մայրս թրքերէն չէր գիտեր: Նոյնիսկ իր թրքերէն չիմանալը հեզնանքի նիւթ կը դառնար ընտանեկան յարկի տակ:

Ե.Տ.- Ծնորհակալութիւն հարցազրոյցից համար:

Ա.Տ.- Ես շնորհակալ եմ ցուցաբերուած ուշադրութեան համար:



ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայեան) Ֆերմանեանի մահուան տասնութերորդ (18) տարեկիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Յունուար, 2018ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys յաւարտ Ս. Պատարագի: Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ: Սգակիրներ՝ Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան Վիզէն Գուլումճեան

ԳԵՈՐԳ ԱԹԸՆԸՁԵԱՆ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒԱԾ

Շարունակուած էջ 15-էն

մի 106-րդ Պատգամաւորական Ժողովը՝ գումարուած 2008-ին ի Պէյսայտ, Լոնկ Այլլընտ, «Տարուան Մարզ» հուշակեց Աթընըզեան եղբայրները առ ի գնահատութիւն Առաջնորդարանին անոնց կողմէ եղած շօշափելի նուիրատուութեանց: Պրն. Գէորգ Աթընըզեան կարեւոր նուիրատուութիւն ըրած է նաեւ Մեծագոյն Պոսթոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ՝ նորոգել տալով հովուատան սենեակներէն մին «ի յիշատակ իւր սիրելեաց»: Այլ եկեղեցական հաստատութեանց կարգին նիւթապէս օգնած է նաեւ մերձակայ Ութըրթաուն քաղաքի Ս. Յակոբ Հայց Եկեղեցւոյ իսկ 2011 թուականին օժանդակած է իր ծննդավայր Տիգրանակերտ քաղաքի Սգ Կիրակոս Եկեղեցւոյ վերանորոգման աշխատանքներուն ի նպաստ կատարուած հանգանակութեան: Կարեւոր է յիշել Պրն. Գէորգ Աթընըզեանի բարերարութիւններէն ոմանք Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս: Աթընըզեան եղբայրներ, այլոց հետ, բաժնետէրերն են Երեւանի Ազատութեան Հրապարակի վրայ գտնուող Marriott Hotel-ին, նախկին Արմենիա Հիւրանոց: Այդ կապը առիթ կը ստեղծէ որպէս զի Պրն. Աթընըզեան յաճախ հայրենիք երթալ եւ որոշ ժամանակով մնալ հոն: Հայաստանի մէջ իր

կատարած բազմաթիւ իրագործումներէն մէկը եղած է հայ շինականներուն գործ եւ միջոցներ հայթայթել՝ կաթ, մածուկ, պանիր պատրաստելու, ծախելու եւ ապրուստ ապահովելու նպատակով: Մի քանի տարի առաջ՝ Վրաստանի սահմանամերձ Տաւուշի մարզին մէջ հողեր գնած է որոնց վրայ ներածուած ձիթենի եւ ընկուզենի տնկել տուած տեղացի հայ շինականներուն: Իսկ դաշտերը ոռոգելու համար ջուր հայթայթած է: Այս միջոցներով օգտակար հանդիսացած է տեղաբնիկ հայերուն եւ անոնց համար աշխատանք ապահոված: Նոյն շրջանին մէջ գտնուող Կողբ քաղաքի հանրակառքի կայանը նորոգել տուած է եւ քաղաքի հրապարակին վրայ՝ արձան մը կանգնել տուած: Այսօր՝ Հայաստանի մէջ Գէորգ Աթընըզեանի հաստատած գործերուն շնորհիւ առաւել քան 200 հայեր հանապազօրեայ ապրուստ կ'ապահովեն իրենց ընտանիքներուն համար: Պրն. Աթընըզեան կը հաւաստիացնէ, որ իր կողմէ հաստատուած գործերը ժամանակաւոր բնոյթ չունին եւ պիտի շարունակուին հետագային եւս: Հայրենիքէն դուրս՝ Պրն. Աթընըզեան անդամակցած է այլեւայլ հայ եւ ոչ հայ կազմակերպութեանց եւ օգտակար հանդիսացած անոնց: Երկարամեայ անդամ է Մեծագոյն Պոսթոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ, որուն ծխական խորհուր-

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Շարունակուած էջ 15-էն


եւայլն): Դրամատնային բոլոր ծախսերը դիմողին կը պատկանին: Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած խոհանոցային յարմարութիւններով, Յուլիս 29-Օգոստոս 15 ներառեալ: Ամբողջ այս շրջանին համար, բնակութեան սակն է՝ 810 եւրօ անձգլուի երկու հոգինոց սենեակի մէջ, իսկ 980 եւրոյ առանձին սենեակի մէջ, երկու պարագային ալ՝ լոգարանային եւ զովասարքային յարմարութիւններով: Բնակութեան վճարը, տուեալ ժամանակաշրջանի ընթացքին, ենթակայ չէ օրական հաշուարկումի: Անոնք որ կը խորհին նշեալ թուականներէն աւելի առաջ ժամանել կամ յետոյ մեկնիլ, պէտք է իրենք հոգան իրենց բնակութեան պայմանները այդ օրերուն համար: Պո-Արաք Ընկերակցութիւնը

կրնայ տրամադրել քիչ թիւով կրթաթոշակներ: Ով որ կը փափաքի դիմել կրթաթոշակի համար, պէտք է դիմում նագիրը դրկէ՝ իր կենսագրական բնութագրին (curriculum) ու մէկ երաշխաւորագրի հետ՝ դասընթացքի վարիչին՝ Տ. Լեւոն Արք. Ձէքեանի՝ zkybhs@gmail.com5 ու փոխ վարիչին՝ Դոկա. Բենեդետտա Կոնտինի՝ bendettacon@gmail.com1 Յաւելեալ տեղեկութիւններու համար ելգիր մը ուղարկել հետեւեալ հասցէներուն՝ daniela@padus-araxes.com, bendettacon@gmail.com1 ի հարկին հեռաձայնէլ բջիջայնի թիւերուն՝ +39.347.4562981 (Դանիելա) եւ +39.349.0986027 (Բենեդետտա) Երկուշաբթի եւ Հինգշաբթի առաւօտները ժամը 10:30-13:00 եւ կամ Երեքշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 20:00-21:30 (Իտալիոյ ժամով): Կը խնդրուի լաւ ստուգել երկիրներու միջեւ ժամերու տարբերութիւնը:

դին վրայ ծառայած է անցեալին՝ երկու շրջանով: Գործօն մասնակցութիւն ունեցած է Առաջնորդարանի Հայ Օգնութեան Ֆոնդին: Օգնած է Պոլսոյ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին եւ Պոստոնի հայկական ծերանոցին: Այլեւայլ առիթներով օգտակար եղած է Պոլսոյ Պատրիարքարանին: Սատարած է Պոստոնի The Armenian Mirror-Spectator շաբաթաթերթի գոյատեւման, Armenian Tree Project-ին եւ այլ կազմակերպութեանց: Օտար հաստատութեանց կարգին անոր բարերարութենէն նպաստաւորուած են՝ Միացեալ Ազգաց UNICEF ֆոնդը եւ կրթական գանազան հիմնարկութիւններ, ինչպէս՝ Պոստոն քաղաքի շրջակայքը գտնուող Belmont Day School, Dexter School, Southfield School, Boston College դպրոցները, Ֆիլատելֆիոյ Gettysburg College-ը, հայկական Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ վարժարանը, Անարատ Յղութեան քոյրերու

Ակադեմիան եւ Սայեաթ Նովա պարախումբը: Իսկ 2017-ին՝ Պրն. Աթընըզեանի մեկենասութեամբ Պոլսոյ ծանօթ Արաս հրատարակչութիւնը լոյս ընծայեց Kevork Melikyan Kitab հատորը: 2000 թուականի նոյեմբերին՝ Պրն. Աթընըզեան այլ արժանաւոր հայրերիներու հետ միասին մաս կազմած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շքախումբին՝ Վեհափառ Հայրապետի վատիկան այցելութեան առիթով եւ ներկայ գտնուած՝ Հայոց հայրապետին եւ Հռոմի Յովհաննէս Պօղոս Բ. Պապին պատմական տեսակցութեան: Իսկ 2017 թուականի 29 դեկտեմբերին՝ Երուսաղէմի հայ Պատրիարք Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան Մեծագոյն Պոստոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ պատուեց Պրն. Գէորգ Աթընըզեանը «Սբ. Յակոբեանց Ասպետ» խաչաձեւ ադամանդակուռ շքանշանով:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՄԱՐԶԱԿԱՆ

Սա Պատմական Խաղ էր, որի Մասին կը Խօսեն Գառն 20 Տարի Յետոյ. Կլոպի ու Գուարդիոլայի Յետխաղեայ Մեկնաբանութիւնները



«Մանչեսթեր Սիթիի» եւ «Լիվերպոլի» միջեւ անգլիական Պրեմիեր լիգայի 23-րդ տուրի խաղից յետոյ 2 խումբերի գլխավոր մարզիչները պատմել են տպաւորութիւնների մասին: Լիվերպոլում կայացած խաղում դաշտի տէրերը յաղթել էին 4:3 հաշուով, իսկ Անգլիայի առաջնութեան ընդգծուած առաջատար «Մանչեսթեր Սիթիին» առաջին պարտութիւնն էր կրել Պրեմիեր լիգայի այս մրցաշրջանում:

Յուրգեն Կլոպ. «Հանդիպումները կարելի է դիտել որպէս ֆուտպոլային մարզիչ կամ երկրպագու, եւ ես նախընտրում եմ երկրորդ տարբերակը: Վառ, ինչ հանդիպում էր: 2 խումբերն էլ ներդրեցին բոլոր ուժերը: Սա պատմական խաղ էր, որի մասին կը խօսեն նաեւ 20 տարի յետոյ, քանի որ, երեւում է, «Մանչեսթեր Սիթիին» այլեւս պարտութիւն չի կրի այս մրցաշրջանում:

Խոսեպ Գուարդիոլա. «Մեր առաջին պարտութիւնը: Ծնորհաւորում եմ «Լիվերպոլին», գիտէինք, որ դա լաւ խումբ է: 1:1 հաշուի ժամանակ խաղը մեր ձեռքում էր, սակայն կոլաչին պահերի իրացումն այսօր կաղում էր, իսկ յետոյ հաշիվը մի ակնթարթում դարձավ 4:1: Բաց թողած կոլից յետոյ անհրաժեշտ է կայունացնել խաղը, սակայն մենք այդքան ամուր չէինք:

«Չելսին» Չյաղթեց «Լեսթերին» եւ Բաց Թողեց «Մանչեսթեր Եունայթեդին» Շրջանցելու Զնարաւորութիւնը

Անգլիայի առաջնութեան 23-րդ տուրում Լոնտոնի «Չելսին» հիւրընկալեց «Լեսթեր Սիթիին» եւ չկարողացաւ յաղթանակ տանել, թէեւ վերջնամասում ունէր թուային առաւելութիւն: Գրանցուեց ոչ ոքի՝ 0:0:

Իտալացի Անտոնիօ Կոնտէի գլխավորած խումբը 47 միաւորով հաւասարուեց երկրորդ տեղում ընթացող «Մանչեսթեր Եունայթեդին», որը 23-րդ տուրում կը մրցի «Սթոք Սիթիի» հետ:

Մեսին Առաջին Ֆուտպոլիստն է, Որի Աշխատավարձը 100 Միլիոն Եւրոյից Բարձր է

«Բարսելոնայի» արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսիի իրական աշխատավարձը տարեկան գերազանցում է 100 միլիոն եւրօ, հաղորդում է Mediapart՝ չլում անելով Football Leaks-ին: 2017թ. ամրանը կազմած պայմանագրով Մեսիի չորս տարուայ աշխատավարձը 400 միլիոն եւրօ է մինչեւ հարկերի վճարումը: Իրականում նա ստանում է 50 միլիոն եւրօ հարկերը վճարելուց յետոյ: Բոլոր բոնուսների հետ Մեսիի չհարկուած աշխատավարձը կարող է հասնել 122 միլիոն եւրոյի:



Football Leaks կայքը գրաւում է տրանսֆերային շուկային, ֆուտպոլիստների պայմանագրերի եւ վարձատրութեան գաղտնի կէտերի բացայայտմամբ:

«Ռեալը» Պարտուեց Վերջին Րոպէներին Բաց Թողած Կոլի Զետեւանքով

Սպանիայի առաջնութեան 19-րդ տուրում Մադրիդի «Ռեալն» ընդունեց «Վիլեաուելան»: Ֆրանսացի Զինեդին Զիդանի գլխավորած խումբը պարտուեց նուագագոյն հաշուով՝ կոլ բաց թողնելով 87-րդ րոպէին:

«Ռեալը» 18 խաղից յետոյ 32 միաւորով չորրորդ տեղում է եւ երրորդ տեղում ընթացող «Վալենսիայից» հետ է 5 միաւոր: «Վիլեաուելալը» 31 միաւորով բարձրացաւ 5-րդ տեղ:

Հ.Մ.Մ.Ի Տարեսկիզբի Յաղթանակները

Փաստինայի Հ.Մ.Մ.Ի ֆուտպոլի խումբն սկսաւ ամանորեան յաղթանակներով:

Առաջին մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 7 Յունուար 2018, Մար Վիսթա մարզադաշտին վրայ: Այստեղ Հ.Մ.Մ.Ի Angel խումբը Dinamo Raketa-ի դէմ մրցելով տարաւ փայլուն յաղթանակ մը՝ 6-0:

Երկրորդ մրցումը տեղի ունեցաւ Կիրակի Յունուար 14ին, 2018 Spooky Ghostի դէմ եւ յաղթանակ մը եւս արձանագրեց 3-2 արդիւնքով:

Յաջորդ հանդիպումը պիտի կայանայ Յունուարի 21ին, մրցելով Cobra Kai-ի խումբին դէմ:



«Արարատ Մոսկուան» Յաջորդ Մրցաշրջանում Զանդես կը գայ Զայաստանի Բարձրագոյն Խմբում

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբէն Հայրապետյանը Յունուարի 12-ին կայացած ասուլիսում պատմել է նաեւ, որ «Արարատ Մոսկուա» ակումբը յաջորդ մրցաշրջանում հանդէս է գալու Հայաստանի Բարձրագոյն խմբում: Հայաստանի Առաջին լիգայում հանդէս եկող «Աւան Ակադեմիան» կ'անուանափոխուի «Արարատ Մոսկուա», որի նախագահն է «Տաշիր Գրուպ» ընկերութեան սեփականատեր Սամուէլ Կարապետեանը:



«Իհարկէ, ես գրուցել եմ Սամուէլ Կարապետեանի հետ, բայց ինչ խօսել ենք, պէտք է հրապարակե՞նք: Կարծում եմ՝ բոլորը էլ տարիներով տեսել էք Սամուէլ Կարապետեանի գործունէութիւնը, հայրենասիրութիւնը, նուիրուածութիւնը: Նա պատահական չէ ֆուտպոլում եւ միշտ էլ եղել է հաւաքականի կողքին, միշտ աջակցել է մեզ: Այնպէս որ, նրա՝ ֆուտպոլում ներգրաւուելը պատահական չէ:

Ինչ վերաբերում է Հայաստանի առաջնութեանը, ապա խաղերն անպայման ցուցադրուելու են հայկական հեռուստաթերթում», - ասել է ՀՖՖ նախագահը:

Յիշեցնենք, որ Հայաստանի Բարձրագոյն խմբին այժմ մասնակցում են 6 խումբեր:

Սամուէլ Կարապետեանը նաեւ 2017-ին հիմնադրուած Մոսկուայի «Արարատ» ակումբի նախագահն է: Խումբը հանդէս է գալիս Ռուսաստանի Երկրորդ դիւիզիոնի առաջնութեան «Կեդրոն» գօտու մրցաշարում, որի 17-րդ տուրից յետոյ վստահօրէն գլխավորում է մրցաշարային աղիւսակը՝ 13 միավոր գերազանցելով երկրորդ տեղում գտնուող «Ռյազանին»:

Զայաստանի Առաջատար Դահուկորդը Զի Մասնակցի Օլիմպիական Խաղերին

Դահուկորդ Սերգէյ Միքայէլեանը չի մասնակցի Օլիմպիական խաղերին: Նրան կը փոխարինի կրտսեր եղբայրը՝ Միքայէլ Միքայէլեանը:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում Աշոցքում կայացած դահուկավագքի Հայաստանի առաջնութեան ընթացքում ասաց Հայաստանի առաջատար դահուկորդ, Սոչի-2014 ձմեռային Օլիմպիական խաղերի մասնակցի Սերգէյ Միքայէլեանը:

«Ես արդէն ունէի օլիմպիական ուղեգիր, բայց վերջին մարզումների ընթացքում ծնկի վնասուածք եմ ստացել եւ մի քանի մեկնարկի դուրս չեմ եկել, ինչի պատճառով կորցրել եմ իմ դիրքը 300 լաւագոյնների ցուցակում: Ես չեմ մասնակցի Օլիմպիական խաղերին: Չկարողացայ նոյնիսկ մասնակցել Հայաստանի առաջնութեանը, որն ինձ հնարաւորութիւն կտար բարելաւել միաւորներս: Ափսոսում եմ, բայց այս Օլիմպիական խաղերը բաց կը թողնեմ: Ուրախ եմ, որ արդէն հաստատուել է եղբօրս՝ Միքայէլ Միքայէլեանի մասնակցութիւնը: Նա նոյնպէս ունի բաւականաչափ միաւորներ, որոնք բաւարարում են օլիմպիական ուղեգրի համար», - ասաց Սերգէյ Միքայէլեանը:

Լենդոն Դոնովանը Վերսկսել է Կարիերան

Ֆուտպոլի ԱՄՆ-ի ազգային հաւաքականի նախկին խաղացող Լենդոն Դոնովանը վերսկսել է ֆուտպոլիստի կարիերան: 35-ամեայ կիսապաշտպանը պայմանագիր է կնքել մեքսիկական «Լեոնի» հետ:

ԱՄՆ-ի բոլոր ժամանակների լաւագոյն ֆուտպոլիստներից մէկը կարիերան աւարտելու մասին որոշումն ընդունել էր 2016 թուականին:

Դոնովանը նախկինում հանդէս է եկել «Լոս Անճելոս Կելսփիում», «Բայերում», «Սան Խոսե Էրթ քվէյքսում», «Բաւարիայում» եւ «Էվերտոնում»:

